№ 152 ՇԱԲԱԹ, 14 ՅՈՒԼԻՍԻ

1912
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 14 ՅՈՒԼԻՍԻ № 152

…ան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի.
…ատական համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
…ւում գրվում են խմբագրատանը.
…սցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆօն № 2—53.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզւով.
Յայտարարութիւնների համար վճարում են նիրքանցիք տողատեղին 20 կոպէկ.
Տպարանի տելեֆօն № 67.

ՄՇԱԿ
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".
TIFLIS, Rédaction du journal „MSHAK".

ՅՈՒԼԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 6 ՌՈՒԲԼԻ.
Յուլիսի 1-ից մինչև օգոստ. 1-ը 85 կ.
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ. ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ.

Յայտարարութիւնների համար պէտք վճարել. I երեսի վրա նիրքանցիք տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К°, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնօյում՝ Большая, 38, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

«ՄՇԱԿԻ» ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ
ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
Համալի Մալախարճիրը
Գ. ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑԻ
Գինն է 30 կոպ.
(Ճանապարհածախքով՝ 38 կոպ.)
Այս գրքի վաճառումից գոյացելիք գումարը յատկացվելու է «ՄՇԱԿԻ» ապահովութեան ֆօնդին.
Հասցէն՝ Тифлисъ, Ред. газ. „Мшакъ", կամ Tifl s, Rédaction du journal arménien „Mschak"

ԱՊՕԼԼՕ
Այսօր ծրագրից դուրս ցոյց կը տրվի
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԷՈՐԳ V-ի
ՕԾՈՒՄԸ
Էջմիածնում, յուլիսի 1-ին, 1912 թ.
513. 2—1

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԱՑՈՒՄԸ

Խորհրդաւոր, անեղաշարժ դէպքեր են կատարվում Մերձաւոր Արեւելքում, դէպքեր, որոնք սպառնում են վերաբանալ Արեւելեան հարցը իր ամբողջ ծաւալով. Այն, ինչ որ այսօր կատարվում է Թիւրքիայում, ազդանշան է և խորհրդաւոր ազդանշան, թէ գուցէ մօտալուտ է օսմանցիների տիրապետութեան անկումը, թէ գուցէ մօտալուտ է, որ հիւանդ կոչված մարդը իջնէ գերեզման և նրա աճիւնների վրա առաջ գան, ծնվեն նոր մարմիններ. Ցամենայն դէպս այդ դէպքերը ցոյց են տալիս, որ երիտասարդ-թիւրքերի 4-ամեայ տիրապետութիւնը իր վախճանին է հասել, որ եւրոպական մեծ պետութիւնները երևի շուտով նորից կը կոչվեն հսկելու խաղաղութեան և անդորրութեան վրա Բալկաններում, գուցէ և Փոքր Ասիայում. Կարող է նորից ծագել և Հայաստանի րէֆօրմների հարցը, քանի որ երիտասարդ թիւրքերը իրանց 4-ամեայ կեղծ սահմանադրական րէժիմի օրով անկարող հանդիսացան իրագործել նոյն իսկ մինիմում այն րէֆօրմները, որ 1894 թ. մեծ պետութիւնները ծրագրեցին Հայաստանի համար.

Մոսկվայի «Рус. Сл.» թերթը յուլիսի 1-ի իր համարում խօսելով այն նոր կուսակցութեան (ահրարների) մասին, որ այժմ սկսել է գերակշռող դեր ստանալ Թիւրքիայում, խօսելով երիտասարդ-թիւրքերի գործած սխալների, ինչպէս և այն սխալների մասին, որ գործեցին եւրոպական մեծ պետութիւնները՝ գործողութեան լիակատար ազատութիւն թողնելով երիտասարդ-թիւրքերին, գալիս է այն եզրակացութեան, որ պէտք է այժմ որոշ աւանս և աջակցութիւն ցոյց տալ ահրարների կուսակցութեան, երբ սրանց կաջողվի տապալել երիտասարդ-թիւրքերին և երկրի կառավարութիւնը իրանց ձեռքն առնել.

«Երիտասարդ թիւրքերի կատարած յեղափոխութիւնից յետոյ,—ասում է ռուս թերթը,—եւրոպական մեծ պետութիւնները արմատական կերպով փոխեցին իրանց քաղաքականութիւնը Թիւրքիայի վերաբերմամբ և գործողութեան գրեթէ լիակատար ազատութիւն թողեցին նոր գործիչներին, որոնք իրանց նպատակն էին յայտարարել օսմանեան կայսրութեան ներքին վերածնութիւնը. Եւրոպական կօնցերտի մի տեսակ լռելեայն համաձայնութեամբ Թիւրքիայի վրայից վերցվեց միջազգային խնամակալութիւնը և երիտասարդ-թիւրքերի նոր կառավարութեան ձեռքն ընկան մեծաքանակ դրամական միջոցներ և երիտասարդ-թիւրքերը միանգամից դարձան օրվայ հերոսներ, իսկ եւրոպական հասարակական կարծիքի կողմից նրանց ցոյց տրվեց գրեթէ անսահման կրեդիտ. Այժմ, երբ երիտասարդ-թիւրքական րէժիմը լիակատար սնանկութիւն ցոյց տուեց և լուծվեց իր՝ Թիւրքիայի մէջ, եւրոպական դիպլօմատիան պէտք է վերաքննէ իր յարաբերութիւնները Թիւրքիայի հետ. Միջազգային դիպլօմատիայի և եւրոպական հասարակութեան հիմնական մեղքը կայանում է նրա մէջ, որ նրանք չը նկատեցին երիտասարդ-թիւրքական վերածնութեան նեղ ազգայնական և շօվինիստական բնաւորութիւնը. Բայց այժմ այդ ակներև է և Բերլինի դաշնագիրը ստորագրող մեծ պետութիւնները երբ տեսան, որ Եւրոպայի վստահութիւնը խաբված է, նրանք պարտաւոր էին պահանջել իրաւագիտական status quo ի վերականգնումը և իրագործումը այն պարտականութիւնների, որ 1878 թ. Թիւրքիան վերցրել է իր վրա Բերլինի դաշնագրով. Սակայն եւրոպական դիպլօմատիան գերադասեց մատների արանքով նայել երիտասարդ-թիւրքերի սխրագործութիւնների վրա, որոնք ստիպեցին Թիւրքիայի քրիստոնեայ ազգաբնակութեան ափսոսալ նոյնիսկ արիւնախում սուլթանի ժամանակները. Եւրոպական կօնցերտի այդպիսի ապատիան, անտարբերութիւնը Կ. Պօլսում համարվեց իբրև Եւրոպայի լիակատար անզօրութեան նշան և երիտասարդ-թիւրքերը համակվեցին խրոխտութեան մանիայով, որից նոյնիսկ իտալական թնդանօթների որոտները չեն կարողանում բժշկել նրանց».

Ապա լրագիրը խօսելով, թէ, ինչպէս երևում է, երիտասարդ-թիւրքերի տիրապետութեան պէտք է յաջորդէ ահրարների տիրապետութիւնը, մի կուսակցութիւն, որ կազմում է ազատամիտ տարրերի դաշնակցութիւն և որի դէվիզն է օսմանեան կայսրութեան բոլոր կուլտուրական ազգութիւնների լայն ազգային աւտօնօմիան, որի ծրագիրը, համակված ֆեդերալիստական ոգով, տրամագծօրէն հակառակ է երիտասարդ-թիւրքերի կենտրօնացման քաղաքականութեան, որը իր անկիւնի գլուխն դրել է կայսրութեան զանազան տեղերի թիւրքացումը—յոյս է յայտնում, որ ապագայ ազատամիտ կաբինէտը կաշխատէ ամենից առաջ խաղաղ կերպով լուծել ծայրերկրեան բոլոր հարցերը և լայն աւտօնօմիա պարգևել Ալբանիային, Մակեդօնիային, Արաբիային, ինչպէս և հայերին և յոյներին՝ մուսուլմանների հետ հաւասար իրաւունքներ տալ գործով և ոչ թղթի վրա.

Ինչ պետք է [illegible] գաներում հայերը Թիւրքիայում և ինչ վիճակ է սպասում նրանց, այդ մասին կը խօսենք վաղը.

Հ. Առաքելեան.

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

12 յուլիսի

Պարիզ.—Կլեմանսօն մի բաց նամակ տպեց յանուն Պուանկարէի ի պատասխան վերջինիս Ժերարմերէում արտասանած ճառի. Կլեմանսօն Պուանկարէին համարում է հաստատակամ և լօյեալ հանրապետական, բայց վկայում է, որ Պուանկարէն, ցանկանալով իրան նեցուկ ստեղծել ծայրայեղ կուսակցութիւնների մէջ՝ րէակցիօներների մի կողմից, և յեղափոխականների միւս կողմից, առաջ բերեց պառակտում հանրապետականների մէջ. Կլեմանսօն երկիւղ է կրում, որ Պուանկարէի գործելակերպը կարող է ամենածանր հետեւանքներ ունենալ.

Պուանկարէն, պատասխանելով Կլեմանսօյի բաց նամակին, ասում է, որ եթէ վերջինիս աջողվի համոզել ընտրողական բարենորոգմանը դէմ հանրապետականներին, այն ժամանակ դա կը լինի նրա քաղաքական գործունէութեան մեծ քաջութիւն. Պուանկարէն գրում է, որ շարունակելու է անկեղծ յամառ ջանքերը, որպէս զի յօգուտ օրէնքի ժողովէ ձախակողմեան մեծամասնութիւն. Աջողվի թէ չէ այդ փորձը—բայց և այնպէս հանրապետական ճնշող մեծամասնութիւնը կը մնայ կաբինէտի կողմնակից.

—

Լօնդօն.—Աօպինգ քաղաքամասում գործաթող բանւորները այրեցին էլեքտրաքարշի վագօնը. Ծովափին տեղի ունեցաւ ընդհարում ոստիկանութեան հետ. Հիւանդանոցները տարվեցին 25 վիրաւոր.

Բանւորների պարագլուխ Վիլսօնը իր կոչի մէջ սպառնում է, թէ ընդհանուր գործադուլ կը յայտարարվի անգլիական նաւահանգիստներում, եթէ բաւարարութիւն չը տրվի Լօնդօնի նաւաշինարանների պահանջներին. Վիլսօնը յորդորում է Մեծ-Բրիտանիայի երկաթուղային ծառայողներին նոյնպէս օժանդակել նաւային բանւորներին.

Ցերեկով 50,000 բանւոր ցոյցով անցան Սիտիով.

Լորդերի պալատ. Հերթին պարսկական հարցի վիճաբանութիւններն են. Լամինգտօնը ցաւում է, որ կառավարութիւնը զոհ բերեց Պարսկաստանի շահերը և պաշտպանում է անգլօ-ռուսական համաձայնութիւնը. Հարաւային Պարսկաստանում շարունակվող անկարգութիւնների առիթով նա խօսում է գլատումների դէմ. Կերզօնը ասաց, որ մութ ամպեր է տեսնում հօրիզօնի վրա, որոնք կարող են վտանգաւոր դառնալ ոչ միայն ռուս-անգլիական յարաբերութիւնների, այլ և Հնդկաստանի համար. Կերզօնը յամառութեամբ առաջարկում է կառավարութեանը աւելի մեծ եռանդ ու համարձակութիւն երեւան հանել Ռուսաստանի հետ բանակցելու ժամանակ և կտրականապէս պնդել Պարսկաստանի ամբողջութիւնը պահպանելու վրա.

Համայնքների պալատն ընդունեց նաւատորմի համար լրացուցիչ գումարայատկացումը. Նոր ճառի մէջ Չէրչիլը ապացուցանում էր, թէ դրութիւնը մինչև 1915 թիւը պէտք է համարվի միանգամայն բաւարար. 1915 թւի վերջին Անգլիան կունենայ 27 դրէդնօուտ, Գերմանիան՝ 17. Լիբէրալ Բրիչէս, չը համաձայնելով կառավարութեան յայտարարութեան հետ, թէ Անգլիային հարկ չի լինի հանդէս գալ Իտալիայի և Աւստրիայի դաշնակցութեան ընդդէմ, յայտնում է, որ Անգլիան պէտք է պատրաստ լինի այնպիսի դէպքերի, որոնք կարող են վրա հասնել այս աշնանը կամ եկող տարի. Գերմանիան մարտակոչ է ուղղել Անգլիային, իսկ այդ հրաւէրը պէտք է վճռապէս ընդունվի.

—

Բէյլ Ստանդարտ.—Ժամը 10 ին շվէդական նաւատորմը ծով մտաւ.

—

[illegible] վայ նման լուրջ է. Տաքութիւնն է 38,2, զարկերակը՝ 105. Ոյժերը սպառվում են.

Անակնկալ հեղեղները մեծամեծ վնասներ պատճառեցին շատ նահանգներում. Քարուքանդ են եղել 40,000 տուն. զոհվել են 30 մարդ. 400 հոգու վիճակը յայտնի չէ.

—

Պիտսբուրգ.—Պէնսիլվանիայի, Վիրգինիայի արևմտեան մասերում, նաև Օհայօի արեւելեան կողմում հեղեղները ահագին վնասներ են պատճառել. Հեռագրական գծերը կործանված են, երկաթուղային երթեւեկութիւնը դադարած է. Մարդկային զոհերի թիւը մեծ է.

—

Վիեննա.—Զինւորական մինիստրութեանը մօտ անձանց յայտնելով մինիստրը, տեսնելով որ մինիստրների խորհուրդը մերժեց պողպատէ նոր թնդանօթներ ձեռք բերելու իր պահանջը, զեկուցագիր է ներկայացրել կայսրին.

ԹԻՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

12 յուլիսի

Կ. Պօլիս.—Ֆէրիդ փաշան հրաժարվեց ներքին գործերի մինիստրի պորտֆէլից. Նրան առաջարկվեց հասարակական աշխատանքների մինիստրի պորտֆէլը.

Մինիստրների խորհուրդը քննեց այսօր բացառապէս ալբանական հարցը.

Հրատարակվեց սուլթանական իրադէ յատուկ մասնաժողով Ալբանիա ուղարկելու մասին.

—

Պրիշտին.—Ալբանները քաղաքի լիակատար տէրերն են. Զինանոցների զէնքերը բաժանվեց ազգաբնակութեան և բանտարկեալներին. Տեղական զօրքերի կօմենդանտը կալանաւորվեց. Նահանգապետը հրաժարական տուեց. Բօլէտինացը սպառնում է Միտրօվիցային.

—

Վիեննա.—«Պօլ. Կօր.»-ին հաղորդում են Սօֆիայից, որ կառավարական շրջանները մեծ դժգոհութեամբ են վերաբերվում այն տեղեկութիւններին, թէ իբր Բօլգարիայում ազգաբնակութիւնը ռազմաբար է տրամադրված Թիւրքիայի վերաբերութեամբ. Այդ տեղեկութիւնները հերքվում են կտրուկ կերպով. Բօլգարիան մնալու է խաղաղասէր ու լօյեալ.

ԱՄԵՐԻԿԱ ԳՆԱՑՈՂՆԵՐԻՆ

Նիւ-Եօրկում հրատարակվող «Русско-Американское Эхо» լրագրի խմբագիր В. Кругляк-ը մի հետաքրքրական գիրք է հրատարակել, որ կրում է «Դէպի Ամերիկա» (Въ Америку) վերնագիրը. Քանի որ այժմ դէպի Ամերիկա են գաղթում ոչ միայն Թիւրքահայերը, այլև Կովկասից, մանաւանդ Շիրակից շատ հայեր, մենք կարևոր ենք համարում ծանօթացնել «Մշակի» ընթերցողներին մօտիկ ապագայում այդ գրքի այն գլուխների հետ, որը աւելի հետաքրքրական է մեզ՝ հայերիս համար. Իսկ առայժմ կարեւոր ենք համարում «Մշակի» ընթերցողներին ծանօթացնել նոյն հեղինակի «Գաղթ դէպի Ամերիկա» յօդուածի հետ, որ տպագրված է այս վերջերս «Биржевыя Вѣдом.» թերթում.

Ռուս թերթի աշխատակից պ. В. Кругляк-ը իր յօդուածը կազմել է Ամերիկայում հրատարակվող և 263 երես կազմող պաշտօնական հաշւեցոյցից, այնպէս որ նրա տուած տեղեկութիւնների ճշտութիւնը որևէ կասկածից դուրս է.

Ըստ այդ հաշւեցոյցի՝ միայն մի ամսում Ռուսաստանից Ամերիկա գաղթել են 13,754 հոգի, այնպէս որ Ռուսաստանը Ամերիկային «կենդանի հում նիւթ» մատակարարողների շարքում երկրորդ տեղն է բռնում, և գաղթողների թիւը քանի գնում աւելանում է.

Ամերիկա գաղթող 878,587 մարդուց միայն անցեալ (1911 թ.) տարում 25,349 հոգու թոյլ չեն տուել ցամաք դուրս գալու հետեւեալ պատճառներով.

Խելագարութիւն, ապշութիւն .	308 հոգի
Կասկած, թէ եկւորները կարող են բեռ լինել հասարակութեան վրա (այստեղ հաշւի են առնված և խեղկական մուրացկանները)	12,048 »
Վարակիչ հիւանդութիւններ .	2,735 »
Ֆիզիքական և մտաւոր արատներ	3,055 »
Անառակութիւն և անբարոյականութիւն	253 »
Ցանցագործութիւն (քրէական)	644 »
Անառակ կանայք մատակարարողներ	141 »
Պայմանաւորված բանւորներ .	1,633 »

Ըստ տեղական օրէնքի Միացեալ Պետութիւնները չեն թողնում ի միջի այլոց և այն գաղթողներին, որոնք Ամերիկա են գնում ոչ իրանց ազատ կամքով, այլ ագենտների դրդմամբ կամ Ամերիկայից ստացած որևէ նամակի հիման վրա, որով նրանց աշխատանք է խոստացվում. Հաշւեցոյցում բերված են կօնկրետ օրինակներ, երբ գաղթողները յետ են դարձվել.

Բօլգար Իվանօվը 44 հայրենակիցներով եկել էր Պորտլանդ, որպէսզի երկաթուղով անցնէր Չիկագօ. Նրանց մօտ կային հասցէներ Չիկագօյում եղած զանազան բարեկամների անունով գրված մի ձեռագրով. այդ և ուրիշ հանգամանքներ ցոյց տուին, որ նրանք բոլորեքեան մի անձի մօտ էին գնում. Նրանցից մի քանիսը իրանք էին վճարել ճանապարհածախսը, միւսներին օգնել էին ազգականները. իսկ շատերը այդ խմբից՝ պարտք էին վերցրել կուլակներից մինչև 80$^0/_0$-ով. Թէև հաստատուն ապացոյցներ չը կային, թէ նրանք պայմանաւորված բանւորներ էին, բայց և այնպէս տեղական իշխանութիւնը համոզված էր, որ նրանց ուրիշներն էին դրդել Ամերիկա գնալու. և բոլորին յետ դարձրին.

Հայ Գրիգորեանը և իր 16 ընկերները յետ ուղարկվեցին նրա համար, որ պարզվել էր, որ նրանց մօտ (Հայաստան) գնացել է Ամերիկա եղած իրանց երկրացին և խորհուրդ է տուել, թէ ինչպէս գնալ Ամերիկա և գործ ստանալ Թիվերզայդի ցեմենտի գործարանում. Այդ խմբից միայն 4 հոգու է թոյլ տրված մնալ Ամերիկայում.

Ռուս թղթակիցը բերել է նաև մի քանի ուրիշ նման օրինակներ.

Շատ անգամ այն գործարանատէրերը և անձինք, որոնք աշխատաւորներ են բերել տուել օտար տեղերից, ստիպված են եղել ահագին տուգանք վճարել. ինչպէս օրինակ Մօնտան նահանգի Պիրի կալուածատէրը Շօտլանդիայից աշխատաւորներ ստանալու պատճառով ստիպված է եղել 2500 դոլլար (մօտ 5000 ր.) տուգանք վճարել.

Նիւ-Եօրկում գորգի գործարանը օտար տեղերից 111 բանւորներ բերել տալու համար՝ գերադասել է հաշտվել գանձարանի հետ՝ վճարելով կամաւոր տուգանք 10,000 դոլլար.

Պէտք է ի նկատի ունենալ նաև, որ Ամերիկայում իշխանութիւնը ոչ մի բացառիկ պայման չէ ընդունում. Նա երբեք չի մտնում գաղթողների դրութեան մէջ. եթէ գնացողի գրպանում մի կոպէկ էլ չը լինի, պարտաւոր է վերադառնալ, եթէ նրան թոյլ չի տրված Ամերիկայում մնալու։

Գալով այն հարցին, թէ ում է աւելի ձեռնտու գաղթը դէպի Ամերիկա, հաշուեցոյցի մէջ մատնանշվում է, որ ամենից աւելի օգտվում են շոգենաւային ընկերութիւնները, երկաթուղային վարչութիւնները, գործարանատէրերը, կապալառուները, որոնք հարիւր հազարաւոր բանուորներ են բանեցնում, օգտվում են, որովհետև աշխատաւորներ աւելացնելով նրանք հնարաւորութիւն են ունենում վճարելու բանուորներին նուազագոյն աշխատավարձ։

Սխալ է նաև այն, թէ Միացեալ Պետութիւններում օտարերկրացի բանուորների մեծ կարիք կայ. որոշ չափով կարիք զգացվում է միայն հնձի ժամանակ։ Բայց հնձից յետոյ գիւղական բանուորները վերադառնում են և խտացնում անգործների բանակի շարքերը։

Ի լրումն այս յօդուածի, կարող ենք աւելացնել, որ վերջերս Ամերիկայում մշակվում է, ինչպէս գրված է «Запросы Жизни» շաբաթաթերթում, մի օրինագիծ, որով արգելվում է մուտքը Ամերիկա նրանց, որոնք անգրագէտ են։ Ամերիկա գնացողներից պահանջվում է, որ նրանք որևէ լեզուով գրել-կարդալ իմանան։ Մ. Տարախչեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ՄԻ ԿԱՐԵՒՈՐ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ» ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

Անպարկեշտ վարմունք եւ նոր խարդախութիւններ

II

Խարդախութիւնները, որոնք կատարված են այդ տարօրինակ «բացատրութեան» մէջ, հետևեալներն են.

1) «Բացատրութիւնը» գրված է այն ձևով, որ միամիտ ընթերցողը կը կարծէ, թէ «Թիֆլիսի Յոբել. Յանձնախմբի» ընտրութեանը մասնակցել են բոլոր այն 43 հաստատութիւնները, որոնց ցուցակը առաջ է բերված իրանց 62 ներկայացուցիչներով։ Եւ սակայն այդ հաստատութիւնների մէջ յիշված են նաև «Մշակ», «Արօր», «Աղբիւր», «Տարազ», Յովնանեան դպրոց, որոնց ներկայացուցիչները, ինչպէս վերևում տեսանք, ամենևին ներկայ չեն եղել և չեն մասնակցել փետրվարի 8-ի ժողովին, ուր ընտրվել է Յանձնախումբը։ Բացի դրանից, ինչպէս յայտնի է մեզ, շատերը այն ներկայացուցիչներից, որոնք եղել են առաջին ժողովում, [illegible] 8-ի ժողովին։ Ուրեմն՝ ձգտել ցոյց տալ, որ իբր թէ «Մշակը», «Արօրը» «Աղբիւրը», «Տարազը» և Յովնանեան դպրոցն էլ մասնակցել են ընտրութեան, որպէսզի դրանով տպաւորութիւն գործվի հասարակութեան վրա, խարդախութիւն է։ «Մշակը», «Արօրը», «Աղբիւրը», «Տարազը» և Յովնանեան դպրոցի ներկայացուցիչները որևէ կերպով մաս չունեն «Յոբել. Յանձնախմբի» ընտրութեան մէջ։

2) Սուտ է, խարդախութիւն և դիտմամբ հասարակութեանը մոլորեցնելու ձգտում «բացատրութեան» մէջ այն յայտարարութիւնը, թէ «նոյեմբերի 25—26-ը արդէն Թիւրքահայ կենտրոնում՝ Պոլսում էլ պաշտօնապէս ընդունվել ու յայտարարվել է»։ Այդպիսի մի որոշումն մենք մինչև այսօր չը կարդացինք Կ. Պոլսի թերթերի մէջ։ Ճիշդ է, այնտեղ կազմվել է մի բոլորովին մասնաւոր, նոյնպէս ոչ մի հեղինակութիւն և նշանակութիւն չունեցող «Յոբել. Յանձնախումբ», նախագահութեամբ Լարենց անունով մի անձի, որ պատկանում է Արփիարին սպանող ոճրագործների վոհմակին։ Եւ ահա այդ «Յանձնախմբի» որոշումը Լէօն կամենում է ցոյց տալ իբրև Կ. Պոլսում պաշտօնապէս ընդունված որոշում։ Ընդհակառակը, մենք կարդացինք Կ. Պոլսի թերթերում, որ ուսումնական խորհուրդը Իզմիրեան գրական յանձնաժողովին է յանձնել կազմել ծրագիր, թէ ինչպէս մասնակցել մեծ յոբելեանին. ապա կարդացինք, որ Իզմիրեան գրական յանձնաժողովը իր ձեռնհասութիւնից վեր է համարել այդ գործը և այժմ ուսումնական խորհուրդը ինքը պէտք է կարգադրէ։ Եւ մի՞թէ որևէ տարակոյս կարող է լինել, որ Կ. Պոլսի պատրիարքարանը, ազգային վարչութիւնը և հաստատութիւնները արձագանք կը տան Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրաւէրին և ոչ «Թիֆլիսի Յոբ. Յանձնախմբին», որ նրանց համար միայն մի մասնաւոր, տեղական և անհեղինակաւոր մարմին է։ Յամենայն դէպս խարդախութիւն է վեր կենալ ասել, թէ Կ. Պոլսում պաշտօնապէս ընդունված է նոյեմբերի 25—26-ը։ Այդպիսի պաշտօնական որոշումն ազգային վարիչ մարմինների կողմից բնաւ տեղի չէ ունեցել։

3) «Յանձնախումբը» յունիսի 9-ին կայացրած իր որոշումը այն մասին, թէ Էջմիածնի և Կաթողիկոսի վերաբերմունքը միանգամայն անհասկանալի ու անտրամաբանելի և խիստ վիրաւորական է, թէ ինքն որոշել է յետ չը կանգնել և անպատճառ տօնել յոբելեանը նոյեմբերի 25—26-ին, ցոյց է տալիս իբրև կայացած միաձայն։ Այստեղ էլ խարդախութիւն է կատարել և իր այդ խարդախութիւնը վարագուրելու համար՝ դիմել է ճարպիկութեան, բայց շատ անճարակ ճարպիկութեան։ Յայտնի է, որ Յանձնախմբի պատուաւոր անդամ է և Թիֆլիսի թեմի կառավարիչ Եփրեմ եպիսկոպոսը։ Արդ, մինչև այժմ «Թիֆլիսի Յոբ. Յանձնախմբի» տպագրած և ցրած յայտարարութիւնների տակ դրվում էին ստորագրութիւնները Եփրեմ եպիսկոպոսի, նախագահների և անդամների։ Այժմ «Մի կարևոր բացատրութեան» ներքոյ չը կան ստորագրութիւններ, այլ միայն «Թիֆլիսի Յոբ. Յանձնախումբ»։ Եւ այդ արված է դիտմամբ, խարդախութիւնը ծածկելու համար։ Անշուշտ, Եփրեմ եպիսկոպոսը, թէ իբրև առաջնորդ, թէ կարգապահական տեսակէտից, չէր կարող ստորագրել մի գրութիւն, որի ամբողջ տենդէնցը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի վարմունքը պախարակելի ցոյց տալն է հասարակութեան ա- [illegible] նակցել մի որոշման և ստորագրել մի արձանագրութիւն, որ, նրա համար, իբրև ստորադրեալ եկեղեցականի, ըմբոստութիւն կը նկատվէր, որովհետև նա այդպիսի որոշումով ասած կը լինէր Կաթողիկոսին, թէ քո կոնդակը հոկտ. 13-ին տօնել, այն էլ Էջմիածնում, չեմ ընդունում, այլ պէտք է տօնեմ նոյեմբերի 25-ին և Թիֆլիսում։ Եւ, արդարև, ինչպէս Եփրեմ եպիսկոպոսը անձամբ (հեռախօսով) մեզ հաղորդեց մեր հարցման ի պատասխանի, նա ոչ մասնակցել է «Թիֆլիսի Յոբ. Յանձնախմբի» այդ նիստին, ոչ էլ ստորագրել «Մի կարևոր բացատրութիւնը»։ Եւ սակայն Թիֆլիսի Յոբ. Յանձն. գրել է, թէ որոշումը կայացված է միաձայն։

Արդ, եթէ նա, ըստ առաջնոյն, դնէր բացատրութեան ներքոյ բոլոր անդամների ստորագրութիւնները, չէր կարող դնել Եփրեմ եպիսկոպոսի ստորագրութիւնը, և պարզ կը լինէր, որ որոշումը չէ կայացել միաձայն. պարզ կը լինէր, որ այդ որոշման համամիտ չէ «Յանձնախմբի» պատուաւոր նախագահը, ուրեմն իր՝ «Յանձնախմբի» մէջ երկպառակութիւն կայ։ Բայց այդ ձեռնտու չէ Լէօին և բժ. Զարգարեանին. նրանց հարկաւոր էր խուլ կերպով, «բանի զօրութեամբ» իմացնել հասարակութեան, թէ իբր Եփրեմ եպիսկոպոսն էլ համաձայն է։ Եւ ահա մտածել են հասնել այդ նպատակին չը ստորագրելով անդամների անունները «յականէ յանուանէ»։ Եւ եթէ ես անձամբ ստուգած չը լինէի իրանից՝ Եփրեմ եպիսկոպոսից, ես պէտք է մնայի այն կարծիքի մէջ, ինչպէս շատերը մնացել են և դեռ մնում են, թէ Եփրեմ եպիսկոպոսն էլ ստորագրել է այդ որոշման, քանի որ միաձայն է կայացված։ Եւ մեր կարծիքով, Եփրեմ եպիսկոպոսը պարտաւոր է, թիւրիմացութիւնները միանգամայն փարատելու համար, պաշտօնապէս յայտարարել, թէ ինքն որևէ կերպով մասնակցութիւն չէ ունեցել Թիֆլիսի Յոբել. Յանձնախմբի յունիսի 9 ի որոշման և «Մի կարևոր բացատրութեան» խմբագրութեան։

Տարօրինակ չէ, որ մի «Յանձնախումբ», որ ընդունակ է այսպիսի խարդախութիւններ կատարել, դեռ յանդգնութիւն ունի պահանջել, որ ինքն կարող է համազգային մի տօնի ներկայացուցիչ լինել, պահանջել, որ Էջմիածինը զիջէ իր առաջ և հայ հասարակութիւնը իրան նախապատւութիւն տայ։ Եթէ խարդախութիւններ կատարելը, պատմական փաստեր կեղծելը այլ ևս Լէօների համար սովորական բան է դարձել, բժ. Ա. Զարգարեանը չը պէտք է թոյլ տար իրան մասնակցել այդպիսի անվայել և անկորրեկտ վարմունքի մէջ։ «Գէջ գեալդի, թէզ եօրգանդի» ասում է թուրքական առածը. «Ուշ եկաւ, շուտ սովորեց»։ Բժիշկ Ա. Զարգարեանը մի նորեկ է և անծանօթ՝ հայ գրական և հասարակական գործունէութեան ասպարէզում, բայց մթնոլորտը, որով նա շրջապատված է այժմ, փչացնում է նրան մինչ այն աստիճան, որ նա համաձայնում է մասնակցել Լէօնների խարդախութիւններին և թոյլ տալ իրան անկորրեկտ վերաբերմունք դէպի այնպիսի մի հարց, որպիսին է Կաթողիկոսի տնօրէնութիւնը հոկտ. 13-ին յոբելեանը տօնելու մասին։

Թիֆլիսի Յոբել. Յանձնախմբի միւս տղայամիտ առարկութիւններին, որոնցով ճգնում է ցոյց տալ, թէ տօնը պէտք է կատարվի նոյեմբերի 26-ին, մենք կը դառնանք եկող անգամ։ Հ. Ա.

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԾԽԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

Ամենքին էլ յայտնի են այն տգեղ, ցաւալի դէպքերն ու երևոյթները, որոնք տեղի են ունենում եկեղեցիներում կատարվող ծխական ընտրութիւնների ժամանակ։

Շատ անգամ խօսքով վիրաւորանք հասցնելը համարելով քիչ, գտնվում են ծխականներ, որոնք դիմում են նաև ֆիզիկական ուժի՝ ծեծով են ուզում մղել ընտրական պայքար։

Զուգընթաց դրան կարևոր է մատնանշել նաև այն հանգամանքը, որ չը կայ ոչ մի եկեղեցական ծխական ընտրութիւն, լինի այդ տեղի ունեցած աղմուկով, կռւով ու ծեծով, կամ միանգամայն արտաքին ձևական կանոնաւորութեամբ ու խաղաղութեամբ, որ չը պարունակէր իր մէջ անկանոնութեան կամ ընտրական կարգի զեղծման մի որևէ դէպք։

Այդ հիման վրա՝ համարձակ կարելի է պնդել, որ եկեղեցիներում մինչև օրս կատարված ընտրութիւնների մեծ մասը պէտք է համարել անվաւեր, որովհետև չը կայ մի եկեղեցական ծխական ընտրութիւն, որ չը կրէր օրինազանցութեան և կամ ապօրինութեան կնիքը կամ հետքը։

Արդեօք ինչն է պատճառը այդ ամենի։ Ի՞նչ պէտք է անել, որպէսզի ապագում նորմալ և օրինական ուղիով ընթանայ մեր եկեղեցական-ծխական ընտրական գործը, որից մեծապէս կախված է մեր ազգային և մանաւանդ դպրոցական հաստատութիւնների բարգաւաճումը։

Ով որ ականատես է եղել մեր եկեղեցական-ծխական գոնէ մի ընտրութեան, անշուշտ կը վկայէ, որ աղմուկը, հարայ-հրոցը սկսվում է հէնց այն րօպէից, երբ նախագահող աւագ քահանան բանում է ժողովը և առաջարկում նախագահ ընտրել, ապա շփոթը աստիճանաբար զօրեղանալով իր գագաթնակէտին է հասնում, երբ մէկի ծխական լինելու չը լինելու խնդիրն է որոշվում և, ինչպէս սկզբում նկատեցինք, երբեմն բանը հասնում է տուր ու դմփոցի…

Նախ քան այս կէտի լուսաբանելը, մենք անհրաժեշտ ենք համարում պարզել մեր տեսակէտը մեր մէջ, գոյութիւն ունեցող ընտրական պայքարի մասին։

Մեր եկեղեց.-ծխական ընտրութիւններին 90-ական թւականներից շատ ուժեղ թափով պայքարել են ծխականների երկու ստուար համախմբումներ։ Նոյն այդ երևոյթը կրկնվում է և ներկայումս, այսինքն ընտրութիւններին գալիս են ծխականներ, որոնց մեծ մասը նախօրօք համախմբված է այս կամ այն բանակի դրօշակի տակ։

Ընտրող ծխականների համախմբումը կամ բանակների բաժանումը և ընտրական մրցումն ու պայքարումը մենք համարում ենք միանգամայն բնական և օգտաւէտ։ Դա է մեր կարծիքով ամեն մի ժողովրդի առաջադիմութեան անհրաժեշտ գործօնը, դրա conditio sine qua non.

Եւ եթէ երկու հակառակ բանակների ընտրական ընդհարումների ժամանակ տեղի են ունենում ցաւալի դէպքեր, նոյնիսկ ֆիզիքական ուժի գործադրութիւն, այդ երևոյթի պատճառը պէտք է ամենից առաջ որոնել նախ՝ այն բանում, որ մինչև օրս էլ չունենք մի մշակված՝ պարզ ու որոշակի կանոնադրութիւն թէ ծխականների և թէ ընտրական տեխնիկայի վերաբերեալ, երկրորդ՝ հոգևոր իշխանութեան ներկայացուցիչներ՝ աւագ-քահանաները, որոնք բանում են ծխական ժողովները, իրանց միջամտութեամբ, ընտրական գործի թերի՝ անկատար [illegible] վերաբերմունքով աւելի ևս բորբոքում են երկու կողմերին, կրակի վրա իւղ ածելով։

Գուցէ մեզ կառարկեն, թէ նոյնիսկ եւրոպական պարլամենտում տուր ու դմփոցը անպակաս է, թէպէտև գոյութիւն ունեն մանրամասնօրէն մշակված կանոններ՝ հրահանգներ, ուր ամեն ինչ պարզաբանված է։

Եթէ եւրոպական ընտրական ասպարէզի վրա կամ պարլամենտներում տեղի են ունենում ցաւալի ու տգեղ երևոյթներ, դրանց պատճառը լինում է գլխաւորապէս ինքն ընտրող անհատը՝ նրա բնաւորութեան խառնուածքը։

Ընտրողը ինչ որ անում է, պատասխանատուն ինքն է և տուժողն էլ ինքը, իսկ մեզ մօտ համարձակ կարելի է ասել, որ ընտրական ասպարէզի վրա տեղի ունեցող ամեն մի անկանոնութեան և ցաւալի երևոյթի սկզբնապատճառը բղխում է երեք հետևեալ պայմաններից. առաջին՝ նախագահող աւագ քահանայի անկորրեկտութիւնը կամ ընտրական և նախագահական տարրական կանոններին անծանօթ լինելը, երկրորդ՝ հրահանգիչ կանոնների բացակայութիւնը կամ եղածի չափազանց անորոշութիւնն և թերի լինելը, երրորդ՝ ծխականների և նրանց ընտրական իրաւասութեան ստուգութեան անհնարաւորութիւնը։ Կարիք չը կայ ապացուցանելու, որ ամեն մի ընտրական գործում, երբ պայքարում են միմեանց հետ ծխականների համախմբումներ, հոգևոր իշխանութիւնը կամ նրա ներկայացուցիչը պարտաւոր են պահել իրանց օրինապահութեան սահմաններում և անպայման կորրեկտ և, եթէ հոգևոր իշխանութեան ներկայացուցիչը իրան անձեռնհաս է համարում բանալ ու ղեկավարել ժողովը, պարտաւոր է ժողովին առաջարկել ընտրել նախագահ և ոչ թէ ասել՝ «ես իմ կողմից նշանակում եմ այս ինչին իմ տեղը սկզբնական ձևականութիւնների կատարման համար»։

Անհրաժեշտ է ունենալ ընտրութեանց վերաբերեալ մանրամասն մշակված հրահանգիչ կանոնադրութիւն, որպէս զի մինչև իսկ տգէտ կամ անձեռնհաս քահանան էլ կարողանայ գոնէ միմիայն կանոնադրութեան կէտերը գործադրելու և ինքնակամութեան և այլևայլ կամայականութեանց առաջն առնելու համար։

Սակայն մեր եկեղեցական-ծխական ընտրութիւնների ամենացաւոտ կողմն է՝ ծխականների և նրանց իրաւասութեան ստուգութեան հարցը, որ առիթ է տալիս բողոքների, աղմուկի, հարայ-հրոցի և մինչև իսկ երբեմն ծեծի։

Առհասարակ մեր քահանաները սիրում են միմեանցից թագցնել իրանց ծխականների թիւը և երբէք չեն ասում, թէ ովքեր են ծխականները և որքան է նրանց թիւը։ Այս հանգամանքը առիթ է տալիս շատ տրտունջների, թէ ծխական հոգաբարձութիւնների և թէ այլ ընտրութիւնների ժամանակ ծխականների կողմից։ Միայն մի երկու եկեղեցիներ Թիֆլիսում ունեն տպագրված ծխականների ցուցակներ, որոնք ծառայում են իբրև աղբիւր ստուգութեան հարկ եղած դէպքում։ Սակայն այդ էլ չէ գոհացնում և չարիքների առաջն առնում։ Օրինակ՝ տպագրված ծխական ցուցակների թւականից մի երկու-երեք տարի անց, յանկարծ գտնվում է մի որևէ քահանայ, որ ներկայացնում է ընտրութեան համար գումարված ծխական ժողովին մի ձեռագիր ցուցակ նոր ծխականների թւով՝ 40—50, նոյն իսկ թեմական առաջնորդից հաստատված։

[illegible] ժողովը ակամայից ընդունում է այդ նոր ցուցակը, քանի որ նրա տակը դրված է առաջնորդի ստորագրութիւնը, սակայն ամենքն էլ այն համոզման են մընում, որ այստեղ մի «եւ» կայ թագնված… Ահա թէ ինչու։

Ամեն մի քահանայ կարող է վկայել, որ Թիֆլիսում երբեք մի երկու տարվայ մէջ ոչ մի՝ մինչև իսկ ամենաժողովրդական և յայտնի քահանայի ծուխին 40—50 թւով նոր ծխական աւելանալ չէ կարող։ Եթէ մինչև իսկ ընդունենք, որ մի որևէ բացառիկ դէպքի շնորհիւ մի քահանային աւելացաւ 40—50 ծխական, արդեօք ինչպէս պէտք է ստուգել և վաւերացնել այդ ցուցակը։ Զի որ առաջնորդի ստորագրութիւնը կատարվում է լոկ ցուցակը ներկայացնող ծխատէր քահանայի հարցափորձի հիման վրա։ Ինչից և ո՞վ կարող է ստուգել, թէ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՂԱՐԱԲԱՂԻ ԹԵՄԻ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸ 1911/1912 ՈՒՍՈՒՄՆ. ՏԱՐՈՒՄ*)

III

Թեմի ծխական դպրոցներում ուսումնաբանական տարին սկսվել է շատ անկանոն կերպով**)։

Կանոնաւոր պարապմունք, ուսումն. տարվայ սկզբից՝ սեպտեմբերի 1-ից, սկսվել է հետևեալ դպրոցներում. քաղաքիս ծխական դպրոցներում և Նուխի քաղաքի, Նիժի, Վարդաշէնի, Նոգրի, Աշանի, Խնուշինակի ևն. դպրոցներում, միւս դպրոցներում՝ սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսների ընթացքում (3-ին, 10-ին, 12-ին, 20-ին, 17-ին և այլն։

Ամենից ուշ դասերը սկսվել են Նոր-Շէնում և Շաղախ գիւղում (նոյեմբերի 20-ին), վերաբացված է երկու դպրոց, ուր դասատւութիւնը սկսվել է 1912 թ. յունվարի 8-ից։ Ամենավաղ դասատւութիւնն, այսպիսով, սկսվել է սեպտեմբերի 1-ից, իսկ ամենաուշը յունվարի 8-ից։ Տարվայ ընթացքում դասերը դադարել են Ծննդեան և Զատկի արձակուրդներին երկու շաբաթով, Բարեկենդանին՝ հինգ օրով, մի քանի դպրոցներում՝ երեք օրով։ Չեն տօնվել եկեղեցական տօները, բացի Համբարձման և Վեհափառ Կաթողիկոսի անուանակոչութեան և օծման տօները. դպրոցներում պարապմունք չեն լինում կայսերական տօներին։

Ուսումնաբանական տարին իմ կարգադրութեան համաձայն վերջացել է մայիսի 31-ին, մի քանի դպրոցում դասերը դադարել են մայիսի 20-ին, որովհետև դաշտային աշխատանքների ու մարեխի կռւի պատճառով այդ դպրոցների երեխաների մեծ մասը չէ յաճախել դպրոց։

Տարին անցել է խաղաղ՝ առանց խռովութիւնների ու աղմուկների, չէ արձակվել ոչ մի ուսուցիչ (բացի անցեալները) այն դպրոցներից, ուր ես այցելութեան եմ գնացել, և այդ՝ այն պատճառով, որ, ինչպէս վերև ասացի, այդպիսի իրաւունք վերապահել եմ թեմական վարչութեանս։

Դպրոցներում ամենամեծ եռանդ ու աշխատանք հաւասար չափով գործադրվում է թէ հայոց լեզուի և թէ ռուսաց լեզուի վրա, գովելի չափով թւաբանութեան և բաւարար չափով միւս առարկաների վրա. թոյլ է կրօնի և երգեցողութեան դասաւանդութիւնը, բոլորովին անուշադրութեան է մատնված նկարչութիւնը, բացի Նոգրի դպրոցից, ուր այդ առարկան դրված է նախանձելի հիմքերի վրա։ Ծխական դպրոցներում պարապմունքներն ընդհարապէս լինում են երկու կամ երեք միացեալ բաժանմունքների հետ միաժամանակ և ուսուցիչը հնարաւորութիւն չունի միացեալ բաժանմունքներում միևնոյն ժամանակ պարապել բանաւոր բոլորի հետ, նա ստիպված է մի բաժանմունքի հետ պարապել բանաւոր, իսկ միւսին տալ գրաւոր աշխատանք, և ընդհակառակը. այս հանգամանքը մեծ զարկ է տալիս գրաւոր աշխատանքներին և միայն դրան պէտք է վերագրել այն վարժ, կանոնաւոր և գեղեցիկ գիրը, որ ունեն թեմիս ծխական դպրոցների աշակերտ-աշակերտուհիները (ոչ քաղաքինը)։ Թերթեցէք նրանց տետրակները—մաքրութիւն, խնամք, գեղեցկութիւն. ահա թէ ինչ էք տեսնում. թւում է, թէ այդ տետրակները գիւղական ցեխի ու կեղտի մէջ կորած երեխաներինը չեն։ Գրութիւնները կատարվում են մեծ մասամբ մի գծանի տետրակների վրա, թէ առաջին և թէ երկրորդ ու երրորդ բաժանմունքներում։ Գործածական դասագրքերն են. ամենաընդունվածը հայերէնի համար «Լուսաբեր» և շատ քիչ (մի երկու դպրոցում) Աղայեան կամ «Դասընկեր». ռուսերէնի համար՝ Дависъ-ի «Родной Міръ» կամ Корханиди-ի «Живое слово». կրօնի համար՝ Սահակ ք.-ի դասագիրքը. կան դպրոցներ, ուր առաջին բաժանմունքում դասագիրք չը կայ, այլ անցնում են բարոյախօսական դասեր. հայոց պատմութեան համար՝ Ռ. Խան-Ազատի և Գ. Վարդանեանի՝ նախապատմութեան մասը, թւաբանութեան համար՝ Սպարապետեանի դասագիրքը, բնական պատմութեան համար՝ Նիկողայոս Սարգսեանի դասագիրքը. հայրենագիտութիւնն աւանդվում է առանց դասագրքի, իսկ երգեցողութիւնը՝ միացած լեզուի դասաւանդութեան հետ։ Աշանի երկդասեան դպրոցում աւանդվում է նաև գերմաներէն, ռուսաց քերականութիւն, ռուսաց աշխարհագրութիւն և ընդհանուր պատմութիւն։ Աշակերտ-աշակերտուհիները իրանց մտաւոր պատրաստութեամբ, կանոնաւոր շարադասութեամբ գրելու և ուղղագրութեան կողմից շատ բարձր են կանգնած, քան քաղաքիս ծխական դպրոցները։ Գիւղական դպրոցի Գ. բաժանմունքի աշակերտը հայրենագիտութիւնից, երկնային մարմինների և բնութեան մի շարք երևոյթների մասին աւելի գիտէ, քան թեմական դպրոցի համապատասխան դասարանի աշակերտը, իսկ հայերէնից նա արդէն անսխալ և ազատ գիտէ որոշել նախադասութեան անդամները՝ գոյականը, ածականը և այլն, հոլովում, խոնարհում է հիանալի կերպով։ Գեղեցիկ ու վարժ գրութեան կողմից կարող եմ վստահօրէն առանց չափազանցելու ասել, որ կը մրցեն Զ. դասարանի աշակերտներից շատ շատերի հետ։ Գիւղական դպրոցներում շատ շատ են արտակարգ ընդունակութեան տէր երեխաները։ Հոգիս լցվում է մի անբացատրելի հրճուանքով, երբ այդ բանական արարածների հետ առիթ եմ ունենում խօսելու կամ հարցումներ անելու նրանց. ես մտնում եմ նրանց, հետաքրքրութեամբ ու ակնածութեամբ նրանք ուղղում են դէպի ինձ իրանց հայեացքները և նրանց խոհուն աչքերի մէջ ես տեսնում եմ ապագայ տաղանդների հեռանկարը. սակայն հրճուանքս շուտով փոխվում է դառն վշտի, որովհետև գիտեմ, որ փոքրիկ տաղանդները, որպէս մարգարտի հատիկներ՝ տրորված՝ մարդկանց ոտների տակ, վաղ թէ անագան զոհ պիտի դառնան գիւղական իրականութեան խաւար միջավայրին և յաւէտ չքանան շինական կեանքի թունոտ մթնոլորտում… Եւ քանի՜ քանիսն են կուլ գնում մեր միջավայրի տգիտութեան։

Եթէ գիւղական դպրոցների վրա գործադրվեն այն աշխատանքի ու ջանքի գէթ մի հարիւրերորդ մասը, որ թափվում է մասնաւորապէս թեմական դպրոցի և ընդհանրապէս քաղաքի ծխական դպրոցների վրա. և եթէ գիւղական դպրոցների դասատուները նուազ չափով ունենան այն յարմարութիւնները և գտնվեն այն նախանձելի պայմանների մէջ, որ ունեն և որի մէջ գտնվում են քաղաքի դպրոցների դասատուները, կարելի է վստահ կերպով ասել, որ գիւղական դպրոցներում հրաշքներ կը գործվեն։ Գիւղական ուսուցիչները, մեծ մասամբ, աւարտել են Շուշու թեմականը։ Թէ ինչ է տուել և ինչ է տալիս այդ հիմնարկութիւնը իր սաներին, այդ մասին ես աւելորդ եմ համարում այստեղ կանգ առնել, միայն բաւական է յիշել, որ թեմի ծխ. դպրոցների թեմականաւարտ ուսուցիչների մէջ քիչ չէ նրանց թիւը, որոնք չեն կարող առանց սխալների ու կանոնաւոր շարադասութեամբ արտայայտել իրանց մտքերը։ Ինչ որ պակաս է թողել թեմականը իր սաների մտաւոր յետամնացութեան գործում, այն լրացնում են գիւղական կեանքի պայմանները։ Ուսուցիչն այստեղ չէ ստանում թերթ, չէ կարդում գիրք, լինի այս մանկավարժական թէ այլ բովանդակութեամբ։ Տարիներ շարունակ նա, զուրկ՝ կրթված ու ինտելիգենտ շրջանից, քայքայում ու սպառում է իր հոգեկան մտաւոր ուժերը. և եթէ նա հնարաւորութիւն չէ ունենում քաղաքում վերականգնել այն, մի քանի տարուց յետոյ մեր առաջ տեսնում ենք ոչ թէ մի ուսուցիչ, այլ մի գրագէտ գիւղացի։ Նա այնտեղ ծանրաբեռնված է ուժերից ու կարողութիւնից վեր աշխատանքներով։

Նա պարապում է երեք բաժանմունքի հետ միաժամանակ, անմաքուր ու փոշոտ, ցուրտ ու խոնաւ, դպրոցական յարմարութիւններից զուրկ մի սենեակում 40—50 և երբեմն 60 երեխաների հետ. նրա վրա է ընկնում երեխաների դասական պիտոյքները մատակարարելու գործը, թօշակներ գանձելու, դպրոցի հաշիւները պահելու, մի խօսքով՝ դպրոցական գործի թէ կրթականի ու թէ տնտեսականի ամբողջ հոգսն ու ծանրութիւնը։ Դասերից յետոյ էլ նա հանգիստ չէ, պէտք է ուղղէ տետրակներ, ստուգէ գրաւոր աշխատանքները. իսկ այս տևում է ժամեր։ Նրանց տնտեսականն էլ մխիթարական չէ, ստանում են 200—400 ր. և սակաւ դէպքում 5—600 ր. և այն էլ որպիսի՜ նեղութիւններով։

Ուսուցիչների համար տնտեսական անմի նոր ծխական արդէն երկու տարի է, ինչ ծուխ է գրված և կարող է ընտրութեան մասնակցել. ինչով է հաստատվում ծխականի չափահասութիւնը. արդեօք մի ծուխից հայրը և չափահաս որդիքն ևս իրաւունք ունեն մասնակցելու ընտրութեան թէ ոչ. երբեմն թոյլ են տալիս ծուխի մի ներկայացուցչին մասնակցել ընտրութեան, երբեմն մի քանիսին և այլն և այլն։ Ահա մի շարք հարցեր, որոնք պէտք է պարզաբանված լինէին բացատրական հրահանգիչ շրջաբերականներով։

---

*) Տես «Մշակ» №№ 149, 150 և 151.

**) Այս անկանոնութեան պատասխանատուութիւնից ազատ եմ համարում ինձ, որովհետև ես պաշտօնի հրաւիրվել եմ ուսումնական տարվայ սկզբից ուշ։

Սակայն նորից կրկնում ենք, որ ամենաէականը և կարևորը ծխականների ստուգութեան հարցն է, դրա համար մենք առաջարկում ենք հետևեալ միջոցը. ամեն մի եկեղեցու երեցփոխ դրամական ելից ու մուտից մատեանի նման պէտք է ունենայ ծխականների ելից և մուտից մատեան։

Այդ մատեանում քահանաների գրաւոր յայտարարութիւնների հիման վրա երեցփոխը մուծում է ժամանակագրական կարգով թէ նոր (հինները արդէն մուծված պէտք է լինեն) ծխականներին մուտից մասում, կամ արձանագրում է դուրս եկող ծխականներին ելից մասում, հիմնվելով քահանայի գրութեան վրա, որը նոյնպէս պահում է երեցփոխը իր մօտ՝ իբրև փաստաթուղթ։ Այդ տեսակ մատեանը միշտ հնարաւորութիւն կը տայ հէնց իրանց ծխականներին ստուգելու, թէ ով է ծխական և որ ժամանակից։

Մենք այս յօդուածով կամեցանք մեր եկեղեցական-ծխական ընտրութիւնների պակասաւոր կողմերը մատնանշել, որոնց վերացմամբ, մեր կարծիքով, կարելի է շատ թիւրիմացութիւնների, տրտունջների և բողոքների առաջն առնել և տեղիք չը տալ նոյն իսկ ցաւալի ու տգեղ դէպքերի։

Ուստի դարձնում ենք մեր հոգևոր բարձր իշխանութեան ուշադրութիւնը այդ խնդրի վրա, որպէսզի օր առաջ միջոցներ ձեռք առնվին կանոնաւորելու մեր եկեղեցուն առանձնայատուկ կարևորագոյն արտօնութիւններից մէկը՝ ծխական ժողովների և ընտրութիւնների հարցը։

Ա. Նազարէթեան

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄՈՆԻԶՄԸ *)

(Սօցիալական խոհեր մի բանակալի ակնոցով)

V

Ո՞րն է արդի եւրօպական հասարակութեան սօցիօլօգիական ստրուկտուրան՝ իր նիւթական հիմքերով, մտաւոր-գաղափարային վերնաշէնքով, իր բարոյական նորմաներով. ո՞րն է այժմեան սօցիալական հակամարտ տարրերի փոխադարձ յարաբերութիւնների խարիսխը, դասակարգային կռւի պատմական էտապի առանձնայատկութիւնները. ինչ բան է ժամանակակից պետութիւնը՝ իր գոյութեան նեցուկներով և գործունէութեան կոչումով. ո՞րն է կրօնի ծագման աղբիւրը, պատմական նշանակութիւնը, խաղացած դերը. որո՞նք են պետական եկեղեցու՝ իր հոգևոր իդէօլօգիայի ողջ ծաւալով՝ միջնադարից մինչև այժմ քաշկըրտած գոյութեան պայմանաւորիչ մօմենտները, նրա «լուսաւորչական» միսիայի իրական տենդենցները, նրա փաստական «պաշտպանութեան» raison d'être. և այլն, և այլն։

Սրանք մի շարք հարցեր են՝ միմեանց խաչաձևող եւ դիալեկտիկական կնճիռներով բարդացած, որոնց առաջ կանգնում է ժամանակակից բնագէտը անհատի նման. նրա մասնագիտական կոնցեպցիան անկարող է տալ դրանց հիմնական բացատրութեան բանալին, վերլուծումների մեթօդը։ Դա հասարակական գիտութիւնների բնագաւառն է, ուր առաջին ու վերջին խօսքը, որոշիչ վճիռներ տալու իրաւունքը պատկանում է սօցիօլօգին։ Մօնիստները անկարող են արմատական կռիւ մղել՝ աջողութեան շանսերով, իրանց առաջ ցցված խաւար ույժերի, խստապարանոց հեղինակութիւնների դէմ, եթէ չը ճոխացնեն իրանց հարուստ փաստերի բնագիտական շտեմարանը՝ հասարակագիտական արսենալից փոխառած զէնքերով։

Այսպէս է թելադրում իրական պայմանների անհրաժեշտ ճանաչողութիւնը։

Սակայն ո՞րն է այն աշխարհահայեացքը, որ իր սկզբունքներով՝ մինչև օրս յայտնի սօցիօլօգիական սիստեմների մէջ՝ ամենաճշգրիտ լուծումներն ու բացատրութիւններն է տալիս թւածս հարցերի և երևոյթների. ո՞րն է այն գիտական հոսանքը՝ իր հասարակական լայն կազմակերպութիւններով, որ իր բովանդակութեան մարտական էլեմենտներով նոյնպիսի օպպօզիցիայի մէջ է գտնվում տիրապետող կարգերի, աւանդական հեղինակութիւնների դէմ, ինչպէս մօնիզմն է էապէս վերցրած։

Դա մարքսիզմն է։

Դարվինիզմ և մարքսիզմ, մօնիզմ և սօցիալիզմ,—դրանք հոսանքներ են, որոնց արտայայտումների սահմաններն ու ձևերը, ճիշդ է, տարբեր են, թէև ոչ հակասական, բայց որոնց տենդենցները ունեն չափազանց յար և նման կողմեր, միմեանց օժանդակող ու լրացնող գծեր. եւ աւելին կասէի՝ առանց մէկի փաստական յաղթութեան, անկարելի է երևակայել միւսի բազմակողմանի գործնական իրականացումը։ Ազատագրութիւն մարդկային մտքի, կաշկանդված ինտելեկտի՝ դարաւոր աւանդութիւնների թանձր նախապաշարումներից, հոգեսպան դօգմատիկ ձևերից։ Ազատագրութիւն մարդկային հասարակութեան գերագոյն մեծամասնութեան՝ իր աքնող ու տառապող վիճակից՝ չնչին փոքրամասնութեան բիրտ տիրապետութեան ներքոյ. վերացումն մարդը մարդուն շահագործելու բոլոր ձևերից՝ ֆիզիքապէս, նիւթապէս, մտաւորապէս, հոգեպէս և բարոյապէս։

Ասացէք, այս նպատակները, որոնց ուղղութեամբ ընթանում են յիշածս հոսանքները, չե՞ն ներկայացնում օրգանապէս շաղկապված բաղադրիչ մասնիկներ միևնոյն գերագոյն իդէալի։

Կասկածել դրա մասին մի բոպէ անգամ՝ նշանակում է լինել մտաւոր դալտօնիստ։

Սակայն մօնիստները, տարաբաղդաբար, դեռ հեռու են երկու հոսանքների գաղափարային անհրաժեշտ դաշնակցութեան խոր գիտակցութիւնից։ Մինչդեռ մարքսիստները ջերմ գուրգուրանքով ողջունում են բնագիտական աշխարհահայեացքի, մանաւանդ էվօլիւցիայի ուսմունքի ամեն մի առաջադիմական քայլ, ամեն մի յաղթանակ մտաւոր աւանդական ստրկութեան դէմ և իրանց հասարակական կռւի ուղիներն ու ձևերը ճոխացնում բնագիտական հետազօտութեան հարուստ արդիւնքներով, մօնիստների համար, ընդհակառակը, մարքսիզմը կամ սօցիալիզմը կատարեալ Spanische Döfer են (սպանական գիւղեր), անծանօթ ու խորթ մի աշխարհ. մի հանգամանք, որ մասամբ բացատրվում է միակողմանի գիտնականների վերև բացատրածս սօցիալական ինդիֆերենտիզմով։ Ցաւում ենք անշուշտ հետզհետէ աճող այն բացառութիւնները, որոնք միաժամանակ ողջեզրվել են Դարվինի և Մարքսի դպրոցներում։

Դրանցից մէկը՝ դօկտոր Լիւդվիգ Վօլտման (այժմ հանգուցեալ) իրաւամբ մատնացոյց է լինում դարվինիստ բնագէտների այդ խոշոր թերութեան վրա (իր նշանաւոր երկերից մէկում՝ «Դարվինական ուսմունքը և սօցիալիզմը» վերնագրով) և իբրև բնորոշիչ նմուշ բերում է իր ուսուցիչ Էրնստ Հեկկելի օրինակը։ Ամբողջ սօցիալիստական գրականութիւնից Հեկկելը ճանաչում է միայն Աւգուստ Բեբելի «Կինը և սօցիալիզմը» վերնագրով աշխատութիւնը. մի՝ անշուշտ յայտնի, բայց շատ բան նախադրող պօպուլեր երկ, որի ընթերցումով չի կարող մէկը՝ առանց որոշ պատրաստութեան՝ ընդգրկել սօցիալիստական աշխարհահայեացքը։

Սակայն անտարբերութեան այդ անցանկալի պատկերը չէ կարող տևական ույժ ունենալ. մօնիստական ծաւալվող շարժման կրիչ օրգանները փորձով նկատում են, որ առանց կռւի աւիւնի, հասարակական լայն հետաքրքրութեան եւ դեմօկրատական պահանջների ու ձգտումների՝ անկարող են ծովափել սօցիալական բազմաշերտ օրգանիզմի ընդարձակ եզրները։

Աւելորդ չէ յիշել այն նշանակալից հանգամանքը, որ ազատախոհների*) միջազգային խմբակցութեան 16-րդ կօնգրէսը, որ կայանալու է այս տարվայ սեպտեմբերին Գերմանիայում շատ յայտնի ույժերի մասնակցութեամբ, իր ծրագրած օրակարգի մէջ մտցրել է նաև՝ «եկեղեցին պետութիւնից բաժանելու» հարցը։ Ասել է՝ մի հիմնապէս դեմօկրատական պահանջ, որ իրականացնել կարելի է զուտ քաղաքական ճանապարհով։ Բայց ո՞րն է այն քաղաքական կուսակցութիւնը, որ ամենայն հարազատութեամբ ու հաւատարմութեամբ առաջադրում ու պահանջում է պարլամենտական երկիրներում այդ հարցի շուտափոյթ լուծումը՝ իբրև ժամանակակից պետութեան հիմնական ռամկավարացման կարդինալ կէտերից մէկը, եթէ ոչ այն մասսայական թարմ ու կենսալիր կողմակերպութիւնը, որի գործնական կերպաւորման տեսական աշխարհահայեացքը ինքը մարքսիզմն է կազմում։

Վաղ թէ ուշ պիտի զգան ու գիտակցեն մօնիստները և ազատախոհները, որ առանց այդ կուսակցութեան դաշնակցութեան և առանց մարքսիզմի մատակարարած հասարակագիտական զէնքերի՝ անկարող պիտի լինեն իրանք կօնկրետ արդիւնքներով պսակել սօցիալական րէակցիօներ հեղինակութիւնների և միջնադարեան խաւար իդէօլօգիայի դէմ մղվելիք իրանց սեփական կռիւը։

Սա փաստ է և անկասկածելի իրողութիւն։

Ինչպէս որ ճնշված մանր ժողովուրդների և կին սեռի ազատագրութեան (ազգային և կանանց) հարցերը՝ իրանց գենետիք հիմքերով՝ մի-մի օրգանական օղակներն են կազմում այն բարդ սօցիալական հանգոյցի, իբրև մի լիամփոփ ամբողջութեան, որի արմատական լուծումից միայն կախված է իր մասնիկների վիճակը, այնպէս էլ բնագիտութեան և կրօնի—ասել է՝ ճշմարտութեան և դօգմայի—դարաւոր կռիւը, որ վարում է այժմ մօնիզմը աստուածաբանութեան դէմ, կարող է իր կատարեալ յաղթանակը բոլոր գծերի վրա պսակել միայն այն ժամանակ, եթէ մարքսիզմով հիմնաւորված իդէալը կիրառումն ստանայ գործնական կեանքում։

Պէտք է վերջապէս խելամտանան մեր յարգելի մօնիստները, որ կրօնական հասկացողութիւնների յամառ տևականութիւնը, եկեղեցական կազմակերպութիւնների դեռ կենդանի ազդեցութիւնը, դօգմատիկ աստուածաբանների հրապարակական հպարտ ու համարձակ ճիչն ու աղաղակը՝ սեփական ույժերի կենսունակութեան արդիւնք չէ ամենևին և ոչ էլ ճշմարիտ իրական պահանջների բաւարարութիւն տալու անհրաժեշտութեան հետևանք, այլ նրանք արուեստականօրէն պահվող ու խնամվող գործիքներ են տիրող դասակարգային պետութեան կողմից, որպէսզի նրանք՝ յօդուա կանգուն հասարակակարգի՝ հոգեոր-իդէօլօգիական շահագործութեան աւերիչ դերը խաղան մասսայի մէջ և դրանով կարողանան «մեծ երեխային», «անմռունչ գերին», հսկայ դեմօսին պղպատեայ սանձի մէջ, արճիճի սալի տակ պահել։

Sapienti sat... B. Intimus

---

*) Տես «Մշակ» №№ 148, 149, 150 և 151.

*) Չը պէտք է շփոթել ազատախոհ (freidenker) և ազատամիտ (freissinnig կամ liberal) տերմինները միմեանց հետ։ Առաջինը նախապաշարումներից ազատ ու անկաշկանդ մտահայեացքի արտայայտութիւնն է. երկրորդը լիբերալիզմ յայտնի քաղաքական տերմինի իմաստն է արտայայտում։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Թիֆլիսի նահանգապետի դիւանը յայտարարում է. «Բարձրագոյնս կարգադրված է տեղեկութիւններ ժողովել 1812 թւին հայրենիքի փրկութեան համար կռւողների յաջորդների մասին։ Այդ առիթով Մօսկվայի նահանգապետը դիմել է խնդրելով տեղեկացնել Թիֆլիսի նահանգի ազգաբնակութեան, որ Բօրօդինի կռւին մասնակցած գեներալների և գլխաւոր օֆիցէրների անմիջական սերունդները իրաւունք ունեն մասնակցել այդ կռւի յօբելեանի տօնակատարութեան օգ. 26-ին Բօրօդինի դաշտում. իսկ Հայրենական պատերազմին մասնակցածների անմիջական յաջորդները կարող են մասնակցել Մօսկվայում կայանալիք հանդէսներին»։

◆ Ներկայումս կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձուի դիւանատունը և Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը գրագրութեան մէջ են Թիֆլիսում միջնակարգ արդիւնաբերական դպրոց բանալու հարցի առիթով, որ յարուցված է դեռ սրանից երեսուն տարի առաջ։ Քաղաքը պարտաւորվում է յիշեալ դպրոցի համար տալ ձրի հողաբաժին Նախալօվկայում կամ Նաւթլուղում։ Եթէ այժմ քաղաքը տայ, ինչպէս առաջարկում է ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը, դրամական օժանդակութիւն ևս, այն ժամանակ այդ ցանկալի կրթական հաստատութեան իրականացման խնդիրը կը դրվի առաջին իսկ հերթին։ Քաղաքային վարչութիւնը այդ նպատակով կարող է ծախսել հանգուցեալ Շիրոյեանի կտակած գումարը։

◆ Թիֆլիսի անակնկալ սաստիկ շոգերը հարկադրում են շատերին շտապել քաշվել ընտանիքներով մօտակայ ամարանոցները։ Մնացողների համար միակ մխիթարութիւնն այն է, որ երեկոները քաղաքում բաւական զով է։ Առանձնապէս ժողովուրդը երեկոները լինում է Մուշտայիդ այգում։ Արևի տակ առայժմ տաքութեան աստիճանը հասնում է 35-ի։

◆ Թիֆլիսի սանիտարական բոլոր ձեռնարկութիւնների ղեկավարութիւնը նախկին տարիների նման, յանձնված է քաղաքային սանիտարական-բժշկական տեսուչ կար. Ստեփանեանին։

◆ Որոշված է սանիտարական կանոնները տպագրել հայերէն, վրացերէն և թուրքերէն և ցրել ազգաբնակութեան մէջ։

◆ Քաղաքային վարչութիւնը յանձնեց բժիշկ Ն. Աբէլեանին մի նախագիծ մշակել Մաղթեան կղզին սանիտարական տեսակէտից բարեկարգելու հարցի մասին։

◆ Քաղաքային վարչութիւնը արձակուրդ տալով մեկնել արտասահման քաղաքային քիմիկոս Ալիբէգեանին՝ յանձնարարել է նրան ուսումնասիրել կենսական մթերքների վրա նշանակված սանիտարական հսկողութիւնը Գերմանիայում։

◆ Թիֆլիսի ռուս օրաթերթերից մի երկուսը վերջերս իբրև լուր հաղորդել էին, թէ իբր երկր. գլխ. վարչութեան կովկասեան լիազօր Աբխազօվը հեռանում է այդ պաշտօնից։ Այդ առիթով «Г. К.» թերթը կտրուկ հերքում է տալիս։

◆ Գիւղատնտես Տիմօֆէևը այժմ զբաղված է վիճակագրական նիւթ ժողովելու աշխատանքներով բամբակագործների համագումարի համար, որ կայանալու է Թիֆլիսում այս հոկտեմբերի 1-ին։

◆ Յուլիսի 12-ին Նիկօլաևսկայա փողոցում, № 50 տան առաջ գտան 6 շաբաթական նորածին տղայի, որ ուղարկվեց Օլգինսկի ապաստանարանը։

◆ Նոյն օրը երեկ. ժամը 9-ին, Բաննայա փողոցում, թիֆլիսեցի 12 տարեկան Ալի-Ալահվէրդին վէճի ժամանակ գրպանի դանակով վիրաւորվեց երկու տեղից 13 տարեկան Օրուջ Հասանի ձեռքով։ Վերջինս կալանաւորված է։ Վիրաւորվածին հասցրին բժշկական օգնութիւն։

◆ Թիֆլիսի քաղաքամասերում ոստիկանական պաշտօնեաները շուրջկալների միջոցով ձերբակալում են անցաթուղթ և գործ չունեցողներին։

◆ Ոստիկանութիւնը կալանաւորեց Բութայիսկայա փողոցում Վասիլի Ջերմխսինին, որ առանց պատշաճ վկայականի տանը պահում էր «բուլդոկ» ատրճանակ։

◆ Խմբագրութիւնս ստացաւ Յովհաննէս Դանիէլեանի կազմած «Ժանտախտ» գրքոյկից երկու օրինակ, որ հանրամատչելի զրոյց է ժանտախտ տարափոխիկ հիւանդութեան մասին, ընդարձակ պատմական տեսութեամբ և երեք պատկերով։ Գինն է 20 կօպէկ։

◆ Կ. Հ. Բ. Ընկ. Ախալքալաքի ճիւղը, պատշաճաւոր իշխանութիւնից ստանալով թոյլտւութիւն, յունիսի 24-ից կազմակերպել է ժողովրդական հանրամատչելի դասախօսութիւններ։ Բացի այդ՝ որոշել է բանալ մեծերի համար կիրակնօրեայ դասընթացքներ։

◆ Բօրժոմի և Աբասթումանի միջև սահմանված է աւտօմօբիլային նոր երթեւեկութիւն։

◆ Բանակային գլխաւոր վարչութիւնը նախագծել է Բագւում բանալ նոր բանտ 800 հոգու համար։

◆ Միջնորդութիւն է յարուցված թոյլատրելու հրատարակել Բագւում նոր քաղաքական գրական լրագիր թուրքերէն՝ «Ժողովրդի Ձայնը» անունով։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Ախալքալաք, 4 յուլիսի

Յունիսի 29-ին տեղս եկաւ Ամօ-Խարազեանի խումբը։

Առաջին ներկայացումը՝ «Ոճրագործի ընտանիքը» խաղացին «Իմպերիալ» հիւրանոցի դահլիճում յուլիսի 2-ին, երկուշաբթի օրը։

Խաղը ընդհանրապէս անցաւ աջող և վերջացաւ ուղիղ ժամը 12-ին։ Հանդիսականները սակաւաթիւ էին։

Հետևեալ ներկայացումը՝ «Ուրիէլ Ակօստա», խաղացվելու է յուլիսի 5-ին։

Էխօ

մխիթար դրութիւն ստեղծելու մէջ, բացի ընդհանուր հասարակական կեանքի պայմանները, պակաս աչքի ընկնող դեր չէ խաղացել նաև նախկին թեմական տեսուչների գործելակերպը։ Ղեկավարող սկզբունք նրանց համար եղել է հնարաւորութեան չափ շատ դպրոցներ բացելը՝ առանց տնտեսապէս ամուր հիմքերի վրա դնելու նրանց գոյութիւնը, մինչդեռ հարկաւոր էր ուշադրութեան առնել, որ տնտեսապէս ապահով լինելով միայն դպրոցների գոյութիւնը կարող է դառնալ յարատև ու հաստատուն, տալ ցանկալի արդիւնք և այս ուղղութեամբ միայն աշխատել։ Այս է միակ պատճառը, որ դպրոցները իրանց գոյութեան հէնց սկզբից սկսել են փակվել նոյն արագութեամբ, ինչ արագութեամբ որ բացվել են նրանք. և հրապարակի վրա մնացել են նրանք, որոնք զանազան բարերարների ու միութիւնների ջանքերով ու օգնութեամբ տնտեսական ապահով դրութիւն են ստեղծել իրանց համար։ Դպրոցական վերահսկիչների սխալ գործելակերպին պէտք է մասամբ վերագրել ուսուցիչների ընկած վարկը ժողովրդի աչքում, այլ և այն, որ գիւղական ժողովուրդը եկել է այն համոզման, թէ կարելի է 200-ով կամ 350-ով բաւարարութիւն տալ ուսուցչի մտաւոր ու տնտեսական պահանջներին և ունենալ լուրջ պատրաստութեամբ դասատուներ։

Մեր գործելակերպը և ղեկավարող սկզբունքը այլ է եղել, աշխատել ունենալ հնարաւորութեան չափ կանոնաւոր, տնտեսապէս ապահով, բոլոր յարմարութիւններով օժտված, փորձված ու լուրջ պատրաստութեան տէր ուսուցիչներով մի արդիւնաւէտ դպրոց, քան շատ և տնտեսապէս անապահով, անկանոն, խախուտ հիմքերի վրա դրված և պակաս արդիւնաւոր դպրոց։ Վարանդայի առաջին մասն, օրինակ, ունի 16 գիւղ և գրեթէ ամեն մի գիւղ ունի իր սեփական դպրոցը. այդ գիւղերը հեռու չեն իրարից, 15 րոպէ կարող է տևել մէկից դէպի միւսը. եթէ այդ 16 գիւղերն ունենային փոխանակ 12 միդասեան դպրոցի 6 երկդասեան դպրոց, այսինքն երկու կամ երեք գիւղ միանալով պահէր մէկը, այդ դէպքում, թւում է թէ, 6 դպրոցը աւելի արդիւնք կը տար, քան 12 դպրոցները, որոնք այժմ հազիւ պահպանում են իրանց գոյութիւնը։ Նոյնը կարելի է ասել և միւս դպրոցների համար։

Պաշտօնակատարութեանս ընթացքում ի շարս միւս պարտականութիւնների ես նպատակ եմ դրել՝ բարձրացնել դպրոցների և դասատուների ընկած վարկը ժողովրդի աչքում, կրթական մասը բաժանել տնտեսականից և առաջինը յանձնել դասատուներին, իսկ երկրորդը՝ հոգաբարձուներին, արգելելով վերջիններիս ձեռնամուխ լինել կրթականին, դասատուներին երեք տարով թողնելով իրանց պաշտօնի մէջ, արմատացնել ուսուցիչ-ուսուցչուհիներին մշտապէս պաշտօնում մնալու գաղափարը կրթական հաստատութիւնների ղեկավարների գիտակցութեան մէջ, իսկ ուսուցիչ-ուսուցչուհիներին ազատել ամառվայ սպանիչ անորոշութիւնից, դպրոցները տնտեսապէս ապահովել պարտադիր ծխական տուրք նշանակելով գիւղական համայնքի վրա և եկեղեցական արդիւնքներից խոշոր մասն յատկացնելով դպրոցներին, դասարանների թիւն աւելացնել և հնարաւորութիւն ստեղծել գիւղական մանուկ սերնդին աւելի զինելու գիտութեան հարուստ պաշարով, դասատուների վարձատրութեան նուազագոյն չափ սահմանել և որոշ կարգ ու կանոնի տակ դնել կրթական գործն ու դպրոցական հիմնարկութիւնները։

Ես կարողացայ անել այս բոլորը, որքան ինձ թոյլ տուեին սուղ ժամանակն ու պայմանները։

Անշուշտ, վերոյիշեալով ես դեռ հիմնովին բարեփոխած չեմ համարում ու մտադրութիւն էլ չունեմ բնաւ բարեփոխած համարելու թեմիս ծխական դպրոցները։ Միայն անհրաժեշտ եմ համարում մատնանշել որպէս քաջ ծանօթ ազգաբնակութեան տեղական պայմաններին ու դպրոցական կարիքներին, որ ամենուրեք, գիւղական ազգաբնակութեան մէջ, շնորհիւ կենտրօնական քաղաքների գիւղական երիտասարդների վրա ունեցած ազդեցութիւնների և հասարակական կեանքի պայմանների ու գաղափարների զարգացման և փոփոխութեան, զգացվում է հնի թօթափումը և նոր կեանքի ու նոր պահանջների կարևորութիւնը. ամենուրեք գիւղական ժողովրդի գիտակցութեան մէջ լոյսի պէս պարզ է այն, որ կեանքի նոր պահանջներին հնարաւոր է բաւարարութիւն տալ միայն և միայն կրթութեան, լուսաւորման և դպրոցի միջոցով. և ահա այս իսկ պատճառով ամեն մարդ կամենում է ինքն առաջ լինել ուսումով, ինքն իմանալ ու ջոկել իր «խէրն ու շառը». ամեն հայր աշխատում է կրթութեան տալ իր զաւակին, համոզված լինելով, որ միայն կրթութեան միջոցով կարող է իր զաւակը ապագայում ձեռք բերել ապահով տնտեսական դրութիւն ու բարեկեցիկ վիճակ. և այս հեռանկարն ունենալով հայ գիւղացին չէ խնայում իր դառն քրտինքով ձեռք բերած կօպէկները իր որդու կրթութեան ու առաջադիմութեան համար։

Երբ ազգաբնակութեան մէջ տիրում է այս տրամադրութիւնը, ապա ուրեմն դպրոցների տէր ու տիրականը, հոգևոր բարձրագոյն իշխանութիւնը, չը պէտք է յապաղի ընդառաջ գնալ ազգաբնակութեան ցանկութիւններին և լուրջ մտածված, հեռուն նախատեսված ու կեանքի նոր պահանջներին յարմարեցված կանոններ մշակելով ու այդ կանոններով հիմնական բարեփոխութիւններ մտցնելով իրան ենթակայ կրթական հաստատութիւնների մէջ՝ զարկ տալ ժողովրդական գիտակցութեան ու կուլտուրական առաջխաղացման գործին։

Թեմիս ծխական դպրոցների քաօսային ու անկեալ վիճակին վերջ տալու համար ներկայ պայմաններում անհրաժեշտ է 1) ունենալ երկու թեմական տեսուչ, 2) տալ սրանց անկախութիւն և ինքնուրոյնութիւն իրանց գործունէութեան սահմաններում, 3) ուսուցիչ-ուսուցչուհիներից տեղ տալ միայն ցենզաւորներին և այդ ասպարէզում ծառայելու ընդունակներին, այլապէս անընդունակները տեղ գտնելով դպրոցներում ձգում են թէ ուսուցչի և թէ կրթական հիմնարկութիւնների վարկը ժողովրդի աչքում, 4) թեմի դպրոցների համար պարտաւոր դարձնել որոշ դասագրքերի գործածութիւնն միայն, 5) հնարաւորութեան չափ աշխատել կրճատել մօտիկ գիւղերի միդասեան՝ երեք բաժանմունքով դպրոցների թիւը՝ վերածելով երկդասեանի. այս հնարաւոր է, որովհետև կան շատ գիւղեր, որոնք հեռու են միմեանցից 1—2 վերստ և առանձին-առանձին ծախսում են իրանց դպրոցների վրա 5-600 և մինչև իսկ 700 ռուբ., մինչդեռ միացնելով երկու գիւղը իրար հետ 1200 կամ 1400 ռուբլով կարելի է մեր թեմում ունենալ երկդասեան դպրոց ամեն յարմարութիւններով, 6) ծրագրային միութիւն ստեղծել ծխական դպրոցների և տեղիս թեմական դպրոցի համապատասխան դասարանների միջև այնպէս, որ ծխական դպրոցն աւարտելով գիւղական աշակերտը կարողանայ առանց քննութեան մտնել համապատասխան դասարանը, մինչդեռ ներկայումս ծխական դպրոցի աշակերտը աւելի շատ բան գիտէ, քան թեմականի համապատասխան դասարանի աշակերտը, որը մեծամեծ դժուարութիւնների է հանդիպում դպրոց մտնել կամենալիս, 7) ուսուցիչ հրաւիրելու կամ արձակելու իրաւունքը վերապահել թեմական վարչութեան, որպէս միակ ձեռնհաս և կարող մարմնի, 8) սահմանել ռոճիկի մինիմալ չափ (թէև ես արել եմ, բայց այդ պարտադիր չէ կարող լինել յետնորդի համար, որը կարող է փոխել իր նախորդի կարգադրութիւնը), 9) հիմնել առաջնորդանիստ քաղաքում մի ընդհանուր ուսուցչական կասսա, ուր պիտի, գործակալների և հոգաբարձուների միջոցով, հաւաքվին թեմի ծխ. դպրոցների ռոճիկները և ապա այստեղից կանոնաւոր կերպով բաշխվին դասատուներին, 10) դպրոցների դասատուների համար հիմնել առանձին գրադարան, որովհետև քաղաքիս գրադարաններից հնարաւորութիւն չունեն օգտվելու ծխ. դպրոցների դասատուները, 11) թեմական վարչութեան հաշւով ամառը կազմակերպել դասախօսութիւններ գիտական և մանկավարժական թեմաներով և 12) Բ. Հ. Կուլտ. Միութեան, Կ. Հ. Բ. Ընկերութեան, մասնաւոր բարերարների նպաստներով ու թեմի կալուածների եկամուտներով ապահովել դպրոցները և նրանց օժանդակութեամբ դպրոցաշէնք, սակաւաբնակ ու աղքատ գիւղերում բաց անել դպրոցներ և այդպիսով զարկ տալ գիւղական ազգաբնակութեան մտաւոր առաջադիմութեան ու ժողովրդական լուսաւորութեան սուրբ գործին։

Առաքել Առաքելեան

Մեծ-Ղարաքիլիսա, 8 յուլիսի

Ամսիս 7-ին Ոսկանեան ամուսինները սկսնակ դերասանների և սիրողների մասնակցութեամբ տուեցին Ս. Թառայեանի «Ազրայիլ» 4 գործ. տրագի-կոմեդիան։

Չը նայած այս պիեսը որոշ չափով տէնդէնցիոզ է, ունի մի քանի հակագեղարուեստական աչք ծակող կողմեր, բայց և այնպէս գաւառական թատրոնի աղքատ ռեպերտուարի մէջ իր պատուաւոր տեղն ունի և երկար ժամանակ կապրի։

«Ազրայիլի» առանցքը կազմող Հայրապետ-աղայի ամենապատասխանատու ծանր դերը ստանձնել էր Ոսկանեանը, որը իր մտածված խաղով տուեց շամախեցի հարուստի ամբողջացրած տիպը և արժանացաւ հասարակութեան հիացմունքին և բուռն ծափահարութիւններին։ Լաւ էր Արուս-Ոսկանեանը (Աննա), որի խաղին գրլխաւորապէս նպաստում են բեմական քաղցր ձայնը և օրինակելի առոգանութիւնը։

Աւելի աջողութիւն կունենար սկսնակ դերասան Կոստանեանը (Մայիլեան), եթէ ամեն կերպ խուսափէր կեղծ-կլասիկական արտասանութիւնից, մի քանի չափազանցութիւններից և անտեղի ոգեւորութիւնից, որոնք ուղղակի նսեմացնում էին խաղի ընդհանուր տպաւորութիւնը։

Տանելի էին տ. Կոստանեան (Կատիա)՝ Նոնիկեան (Մրխտամ-բէգ) և օր. Ջալալեան (պառաւ)։

Միւսները թոյլ էին։

Ներկայացման նիւթականը այս անգամ մխիթարական էր։ Մ. Ղազարեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 11 յուլիսի

Գալատի Թաղի Քամոյեան ս. Գէորգ եկեղեցու միաբան Ցովսէփ ք. Տէր-Պետրոսեանը իր 29-ամեայ գործունէութեան ներբողական նամակի (տես «Մշակ» № 140) և նոյն եկեղեցու օգտին հաւաքած գոյքի հաշւի մէջ խիստ յարձակողական դիրք էր բռնել ինչպէս նոյն եկեղեցու երէցփոխ՝ Վարդապետեանի, հոգաբարձուների և յատկապէս իմ գանձապահիս դէմ։

Նամակագիրը ջանք էր ցոյց տալ, թէ վերոյիշեալ եկեղեցու հոգաբարձութեան հրատարակած հաշիւները, որոնք ներկայացված լին ծխականներին քննութեան, գտնվում են «քաօսային» վիճակում. որ նրան ամիսներով ռոճիկ չեն տուել և ամեն անգամ փող ստանալու համար պարտաւորված է եղել «անեղ պատերազմ մղելու»։ Եւ այս բոլորը հաստատելու համար յիշեալ քահանան փաստ է ներկայացրել, որ 1910 թ. օգոստոսին Վարդապետեանից և 1911 թ. մայիսին ինձանից (Թևեանից) ռոճիկը չէ ստացել, այն ինչ ելքի մատեանում այդ գումարն արձանագրված է։

Եւ իմ «քաօսային» հաշիւների մէջ «խօսողը միմիայն փաստաթղթերն է համարում, ուրիշ ոչինչ»։ (Ընդգծումներն իմն են)։ Այս պատճառով Ց. ք. Տէր-Պետրոսեանը ոչ միայն հրապարակով ինձ ամբաստանում էր հասարակական հաշիւները «քաօսային» վիճակում պահպանելու համար, այլ նա ինձ մի տեսակ մեղադրում է հասարակական դրամները իւրացնելու մէջ, երբ ասում է. «Ա. Վարդապետեանի երէցփոխութեան և Ա. Թևեանի ժամանակաւոր գանձապահութեան օրով երկու ամսական ես չեմ ստացել, ոչ ինձ մօտ է նշանակված, ոչ նրանց մօտ ստացական ունեմ, բայց նրանք հաշիւների մէջ նշանակել են վճարված»։ (Ընդգծումներն իմն են)։

Եթէ բարեբաղդաբար չը գտնէի այդ կորած ստացականը, տէր-հայր, ուրեմն ինձ պիտի կենդանի սպանէիք, ինչպէս նկրտում էիք անուանարկել, խայտառակել ձեր ռոճկի ստանալը այն ամսվան, որի ստացականը կորցնելու դժբաղդութիւնն էի ունեցել։

Բայց ինչ՞ խօսել մի քահանայի հետ, որը այսքան անբարեխիղճ կերպով ինձ անուանարկելուց և հասարակութեան առաջ խայտառակելուց յետոյ, երբ վերջապէս գտայ կորած մուրհակը և ներկայացրի ժողովին, նա փոխանակ զղջալու, փոխանակ խոստովանվելու, թէ վրպարտել է, «Մշակի» 144-րդ համարում ուզում է արդարանալ, թէ ինքը կարող էր այսպիսի մի «սկանդալի զոհ» գնալ այն պատճառով, որ հոգաբարձական գործերը քաօսային վիճակումն էին գտնվում և իր ռոճիկները տարով չէին վճարվում։

Զրպարտութիւններ պէտք չեն. պարզ ասացէք, թէ ձեր ո՞ր տարվան, ո՞ր ամսվան ռոճիկը չէ վճարված և ո՞ր ամսականը «տարիներով» ուշացված է։

Ց. ք. Տէր-Պետրոսեանը իր ստացածը ուրանալը վերագրելով «գործերի քաօսային» վիճակին, ձգտում է չքմեղ հանդիսանալ հասարակութեան առաջ։ Եւ «Մշակում» հարց է տալիս, որ միթէ նա (ես) համոզված է, թէ ես (քահանան) ուզում էի դէպքից օգտվել։

Այո՛, տէր-հայր, ես լիովին համոզված էի, որ դուք դէպքից օգտվելով ձգտում էիք ինձ կենդանի թաղել. իմ անուան, իմ հաւատարմութեան վրա այդպիսի սև խաչ դնելուց յետոյ, ինչպէս այլ ես չէի կարող ապրել։ Էլ ինձ ո՞վ կարող էին հաւատալ իմ պատրոններս և տասնեակ ու հարիւրաւոր հազարների գործ յանձնել, եթէ իմ տան երէցը՝ ծխատէր քահանան ինձ գողութեան, անհաւատութեան և եկեղեցական դրամների իւրացման մէջ էր մեղադրում։

Եթէ ես քունս ու դադարումս կորած ամբողջ երեք օր չը փնտռէի, չը քրքրէի ու չը գտնէի այն կորած ստացականը, որը միայն բացակայում էր ձեր ստացած ամսականներին, միթէ [illegible] Դուք ոչ միայն ձգտում էիք ստացած ռոճիկը կրկին անգամ ստանալ ինձանից, այլ ինձանից դուրս քաշել այդ դրամը հրապարակապէս, որպէս զի ինձ հասարակական գոյքի անհաւատարիմ պաշտօնեայ հրատարակէիք։ Եւ այս բոլորից յետոյ դեռ տրքնում էք ծաղրել ինձ և ցոյց տալ աշխարհին, թէ չարամտութիւն չէր ձեր կատարածը, այլ «քաօսային» վիճակի հետևանք։

Ես գիտեմ որ դուք դատից ու դատաստանական սպառնալիքից վախեցողը չէք, դուք կարող էք ձեր ոլորածոյ պատյաններով մոլորեցնել դատաւորներին էլ, բայց ես հաւատացած եմ, որ վերջապէս արդարութիւնը պիտի յաղթանակէ *)։

Ա. Թևեան

Թիֆլիս, 11 յուլիսի

«Մշակի» № 144-ում իմ անկեղծ վիշտս յայտնելով տեղի ունեցած սկանդալի առիթով, ես կարծում էի, թէ դրամով գործի մարդիկ խնդիրը—բոլորիս համար անախորժ - սպառված կը համարեն։

Բայց սխալվել էի։ Դրանից յետոյ թէ Թևեանը, թէ Վարդապետեանը և թէ—«Խաթաբալայի» մէջ—Կալատուզեանը միացած՝ սկսեցին հայհոյել ինձ։

Սակայն հայհոյանքներին ես պատասխան չունեմ։

Երէկ երեկոյեան բացվեց սկանդալի վրայից վարագոյրը և թէ ինձ և թէ շատերի համար պարզվեց, որ դա լոկ սկանդալ չէր, այլ կատարեալ որոգայթ, վարպետօրէն հիւսված որոգայթ, որի մէջ ես ընկայ ամսիս 1-ին, Վարդավառի կիրակի օրը, և որի մէջ ես մեղադրում եմ մեր ծխ. հոգաբարձութիւնը և հաշուետեսներին։

Երէկ երեկոյեան հոգաբարձութեան գործավարը հրաւիրում է ինձ եկեղեցու խորանը և առաջարկում է ստորագրել եկեղեցու ժապաւինեալ հաշուեմատեանում 1911 թ. ստացած գումարներս։ Ես խնդրեցի ցոյց տալ ստացականներս, որ նոր թիւրիմացութիւն չը ծագի. նա վիրաւորվեց, վրդովվեց, որպէս թէ իրան չեմ հաւատում, ապա հանեց ստացականներս, հինգ հատ։

Առաջին ստացականով՝ մայիսի 2-ին, ստացել եմ յունվարի ամսականս։ Երկրորդ ստացականով՝ յուլիսի 17-ին ստացել եմ յունիսի ամսականս։ Երրորդ ստացականով՝ սեպտեմբերի 6-ին, ստացել եմ յուլիսի ամսականս։ Չորրորդ ստացականով՝ նոյեմբերի 13-ին ստացել եմ օգոստոսի ամսականս։ Հինգերորդը արդէն ստացական չէ, այլ ցուցակ 1911 թ. ստացածս լուսագինների, որոնք ստացած ժամանակ կարգով մուծված են լուսագնի մատեանում, բայց ի հաշիւ ամսականներիս ծախսել էի։ Այդ ցուցակը տրված է հոգաբարձութեանը 1912 թ. մարտի 18 ին և գումարն է՝ 30 ր. 40 կ.։

Իսկ այն ստացականս, որ պահել էր Ա. Թևեանը, մայիսի ամսականինս է, մայիսին տրված (այսպէս ասաց գործավարը), այդպէս էլ ստորագրեցի մատեանում)։ Այս ստացականները հաստատում են այն քաօսը, որի մէջ ամենամեծ դժուարութեամբ տեղի էր ունենում մեր ամսականների տուչութիւնը։ Երեք ամսականս դրամով չեմ ստացել, այլ Մելիք-Բախտամեանի խանութից նատուրայով—կաթ, մածուն, իւղ—ապառիկ. երբ պարտքս դառնում էր 30 կամ աւելի րուբլի, այն ժամանակ ստացական էի ուղարկում։ Այդ ժամանակներում էլ քանիցս ասել եմ հոգաբարձական նախագահ Մելիք-Բախտամեանին, որ ես իմ հաշւիս թելը կորցրել եմ. թիւրիմացութիւնից ազատ մնալու համար ինձ մօտ ոչինչ չեմ նշանակում. հաշւի ժամանակ ստացականներս միայն պէտք է ապացուցական համարվեն, ակնարկելով Վարդապետեանի հաշւից 1910 թւի օգոստոսի բացը։ Ստացականներից երևում է, որ ես ստացել եմ՝ յունվար, մայիս (Թևեանի պահածը), յունիս, յուլիս և օգոստոս ամիսների ռոճիկս, իսկ եթէ հինգերորդ ստացականս համարենք փետրվարի ամսական, բաց կը մնան մարտ և ապրիլ ամիսները։

Ասացէք, խնդրեմ, այս հաշիւը, որ ես քաօսային եմ անուանում ամենայն իրաւամբ, ի՞նչպէս են քննել մեր հաշուետեսները, և ի՞նչպէս են պարզել իրանց համար մեր հոգաբարձուները, որ իրաւունք են համարել ասել, թէ պակասում է մի ամսականի ստացականը, այն էլ յայտնի չէ ո՞ր ամսվանը։

Իրանք տալիս են, իրանք ստացականներ են ստանում, իրանց մօտ նշանակվում են, չեն իմանում ո՞ր ամսվայ ստացականն է պակասում. ես, որ չեմ նշանակում, ի՞նչպէս կարողանայի ասել, թէ ո՞ր ստացականս է պակասում։

Այդ իրարանցման մէջ միայն Թևեանն է, որ ժպիտը երեսին, լռում է, մրթմրթում ծիծաղում է և պատրաստվում է վրէժ հանել տէր-Ցովսէփից, որը քաջութիւն էր ունեցել նրա, Թևեանի երդումը՝ իր միակ որդու կեանքով՝ երեսովը խփել։

Հոգաբարձութիւնն ու հաշուետեսները չեն կարողանում պարզել պակաս ամսականի խնդիրը, սակայն չեն կամենում դիմել ինձ, և չը պարզված՝ տպագրութեան են յանձնում հաշիւները։

Այս գործելակերպի մէջ էլ մեղադրում եմ հոգաբարձութեանը և հաշուետեսներին։

Եթէ զանց չանէին կատարել մի տարրական անհրաժեշտ ձևականութիւն, հաշիւները կարգաւորելու և քննելու ժամանակ ինձ ևս հրաւիրէին, բացատրութիւն խնդրէին և տային, աւելորդ մեղադրանքներ տեղի չէին ունենայ։

Բայց ինչո՞ւ այսպէս եղաւ. չը հասկացան այս ձևականութիւնը, թէ՞ չը կամեցան։

Այդ նոր քննութիւնը կը պարզէ։

Ցովսէփ քահ. Տէր-Պետրոսեան

---

*) Տպելով պարոն Թևեանի նամակը, ինչպէս և Ցովսէփ ք. Տէր-Պետրոսեանի նամակը, խմբագրութիւնը [illegible]

Խմբ.

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Բարձրագոյնս շնորհակալութիւն է յայտնված Երևանի գաւառապետ Կօնստ. Առաքելեանին՝ Պարսկաստան մեկնած գեներալ Վօրօպանօվի զօրամասին աջակցութիւն ցոյց տալուն համար։

◆ Երրորդ Պետական Դումայի գործունեայ հայազգի պատգամաւոր Աջէմեանը այս անգամ ևս իր թեկնածութիւնը դրել է անդամ ընտրվելու համար Ռոստովի կողմից (Դ/վ.)։

◆ Պետերբուրգում և Մոսկվայում Պետ. Դումայի անդամների ընտրութիւնները նշանակված են հոկտ. 20-ին։

◆ Բագուից Աստրախան ուղարկվեց այս օրերում մի միլիոն պուդ մազութ։

◆ «Զլատոուստ» գրահանաւի վրա եղած անկարգութիւնների առիթով դատապարտված նաւաստիներից մահվան պատժի ենթարկվեցին երեքը. իսկ 7-ի մահվան պատիժը չը գործադրվեց և նոյն իսկ բոլորին էլ ներումն շնորհվեց։

◆ Բագւում ստացված տեղեկութիւնների համաձայն, ռուսաց զօրքերը աջողութեամբ վանել են շահսէվան ցեղերին սահմանից։

◆ Թաւրիզում նշանակված պարսից կօզակների բրիգադայի կազմը դարձաւ 8000 զինուոր. դրա համապատասխան էլ աւելացաւ ռուս օֆիցէրների թիւը։

◆ Ուսկիւբից հեռագրում են, որ սենատի քննիչ մասնաժողովի և ալբան պարագլուխների խաղաղ խորհրդակցութիւնը առայժմ ոչ մի աջողութիւն չունի։ Զինված ալբանները սպասում են իրանց լիդէրների հրամանին նոր թափով ծածանելու ապստամբութեան դրօշակը։

◆ Հռոմից իտալական ռազմանաւերին կարգադրութիւն ուղարկվեց հեռու մնալ Դարդանէլից։

◆ Ալբանների սուրը աջ ու ձախ կտրում է Պրիզրէնում, Ուսկիւբում և այլ ապստամբ վայրերում։ Ամբողջ թիւրքական զօրագնդեր զինաթափ են լինում։

◆ Պէկինում մի շարք խորհրդակցութիւններ կայացան պալատում, պրինց Կացուրայի Պետերբուրգ այցելելու առիթով։ Իւանշիկայը խորհրդակցեց ամերիկական դեսպանի հետ։

◆ Պէկինում կալանաւորվեցին մի խումբ անիշխանականներ, որոնք մտադիր էին սպանել Իւանշիկային։

◆ Չինաստանը լիակատար գոհացումն կը տայ Ռուսաստանին ռուսահպատակ մահմեդականների հետ պատահած դէպքի առիթով։

◆ «Нов. Время»-ն Գերմանիայի և Անգլիայի նաւակառուցման մրցման հարցին նուիրած առաջնորդող յօդուածով ասում է, որ Գերմանիան, ենթարկելով իր քաղաքական ու տնտեսական զարգացումը իր հարևաններին, ձգտում է ենթարկել նաև գաղութները, որոնց մեծ մասը Անգլիային է պատկանում։ Ուստի Անգլիան պարտաւորված է զգում իրան կրկնապատկել, եռապատկել իր ծովային ույժերը Լրագիր ասելով, շուտով Անգլիայում կը հաստատվի պարտադիր զինուորական ծառայութիւն։

◆ Հռոմի բանտերում բանտարկվածները իրանց աշխատավարձից 15,000 րուբլի նուիրեցին ազգային օդային նաւատորմի համար։

◆ Մայորինհոֆում մի բոյնի մէջ սպանել են 200 օձ։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ.
12 յունիսի

ՄՈՍԿՎԱ. Դատաստանական պալատը հաստատեց «Новое Земля» լրագրի վրա դրված արգելքը և դադարեցրեց նրա հրատարակութիւնը մինչև դատավճիռը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. «Гроза»-ի խմբագիրը ենթարկվեց 500 ր. տուգանքի։

Դատ է յարուցված «Гражданинъ»-ի խմբագրի դէմ յուլիսի 8-ի համարում տպված «Յուլիսի 5, հինգշաբթի» յօդուածի համար։

ՆԻԺՆԻ-ՆՕՎԳՕՐՕԴ. Կարևոր գործերի քննիչի կարգադրութեամբ զեմստվային ապահովագրական գումարների քայքայմանը առիթ տալու համար դատ է յարուցված նահանգական զեմստվային վարչութեան նախկին նախագահ Սավելիևի և վարչութեան անդամներ Կլեվլէևի, Շվէբլինի և Մենդելեևի դէմ։ Առաջին երկուսը երրորդ Պետ. Դումայի սահմ.-ռամկ. անդամներից են։

ԷԿՎԵՐԻՆԲՈՒՐԳ. Հրդեհը ոչնչացրեց քաղաքամասի կէսը. վնասը 100,000 ր. է։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Վախճանվեց Պ. Խորհրդի անդամ բարօն Ալէքսանդր Իկսուլ ֆօն Գիլդենբանդտը։

Ներքին գործերի մինիստրը [illegible]

ՓԱՐԻԶ. [illegible] է Պետերբուրգի նախկին դեսպանի մարկիզ Մօնտեբելլոյի որդին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Երեկոյեան ժամը 7 և 20 ր. շտաբս-կապիտան Անդրէատին բարձրացաւ Կրասնոյե-Սելոյից։ Ժամը 7 և 45 ր. թռաւ ամբողջ Պետերբուրգի վրայով 1000 մետր բարձրութեան վրա, աջողութեամբ իջաւ Կոմենդանտական աէրոդրոմում։ Օդագնացին ողջունեցին Մեծ Իշխան Ալէքսանդր Միխայլովիչի ադիւտանտը, համառուսական աէրոկլուբի և օֆիցէրական օդագնացութեան դպրոցի ներկայացուցիչները։ Հասարակութիւնը ընդունեց Անդրէատիին ուրախ բացագանչութեամբ և ձեռքերի վրա տարաւ նրան այն տեղը, ուր շամպայն էր պատրաստված։

ԲԵՐՆ. Շվէյցարական 35 բուսաբան, երկրաբան, կենդանաբան և աշխարհագրագէտ պրոֆ. Ռիկլի ղեկավարութեամբ մեկնեցին Ցիւրիխից Կովկաս բնական գիտական հետազօտութիւններ կատարելու համար։

ԿԱՐԼՍԲԱՏ. Ռուս օդագնաց Սլավորոսովը Բլէրիօյի աէրոպլանով թռիչք կատարեց 2600 մետր բարձրութեան վրա։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Զինուորական «Լեբեդ» դիրիժաբլը գնդապետ Ուլեանինի ղեկավարութեամբ 2 ժամ 500 մետր բարձրութեան վրա թռիչք կատարեց Պետերբուրգի վրա։

ԼԻՄԱ. Երկրաշարժից քաղաքը կործանվեց։

Խմբագիր՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ПИЩЕВАРЕНІЕ составляетъ одинъ изъ самыхъ важныхъ процессовъ, происходящихъ въ нашемъ организмѣ, а потому всѣ уклоненія отъ этого процесса и въ особенности запоръ влекутъ за собою опасныя болѣзни. Успѣшно регулировать неправильное пищевареніе можно единственно при помощи средства

СКАВУЛИНЪ

имѣющагося въ продажѣ въ видѣ пилюль безъ запаха и вкуса, которыя устраняютъ запоръ и укрѣпляютъ желудокъ и кишки.

Важная перемѣна. Количество пилюль въ коробкахъ „Скавулинъ" значительно увеличено безъ повышенія цѣны.

(В. 37836)

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ОДОЛЬ
Безспорно
лучшее полосканіе

ԱՄԲՈՂՋ ԵՐԿՐԱԳՆԴԻ ՎՐԱ ՕԴՕԼԻ ՏԱՐԱԾՎԱԾ ԼԻՆԵԼԸ ԻՐԱՆ ՀԱՒԱՍԱՐԸ ՉՈՒՆԻ։

Ոչ մի տրիշ մթերք չէ հասել այնպիսի անօրինակ տարածման աշխարհիս բոլոր երկիրներում։

Մէկ սրուակի գինը—85 կ., մեծ սրուակինը, որ բաւականանում է մի քանի ամիս—1 ր. 50 կ.։
(Կ.) (М. 223994/224002) 2—1

Высочайше Утвержденное Русское Общество Пароходства и Торговли, учрежд. въ 1856 г.
ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ.
Ամառային երթեւեկութիւն
ՂՐԻՄ-ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳԻԾ
Մեկնում են Բաթումից
I Փոստային-մարդատար շոգենաւեր.
Երեքշաբթի ժամի 1-ին գիշերը, շրջանակի գծով
Հինգշաբթի » 1 » »
Շաբաթ » 12 » ուղղակի
II Մարդատար շոգենաւեր.
Երկուշաբթի ժամի 2-ին ցերեկը, շրջանակի գծով
Շաբաթ » 2 » »
III Մարդատար-ապրանքային շոգենաւեր.
Երեքշաբթի կէս գիշերին, շրջանակի գծով.
Ուրբաթ » » »
Ժամերը Պետերբուրգի են։
ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՓՈՍՏԱՅԻՆ ԳԻԾ
Կանոնաւոր հաղորդակցութիւն դէպի Ալէքսանդրիայի, Բուլղարիայի, Մակեդոնիայի, Սիրիայի, Անատոլիայի, Պարսից-Ծոցի (Персидскій заливъ) դէպի բոլոր նաւահանգիստները։
ԲԱԼՏԻԿԱՆ ԳԻԾ
Կանոնաւոր հաղորդակցութիւն ուղղակի Պետերբուրգ-Ռիգա, Լիբավա և Ռեվել։
Տոմսակները կարելի է գնել Թիֆլիսի գրասենեակում, Վելիամինովսկայա փողոց, № 18.
Հեռախօս № 11.
Ընդունվում են և ապահովագրվում են ապրանքներ ձեռնտու պայմաններով։
Գործակալ՝ Ս. Խ. Սուլխանեանց
(Հ.) 0—55

ԿԻՆ-ԲԺԻՇԿ
Ս. Զ. ՄԱԼՈՒՄԵԱՆ
Ընդունում է երեխաների և կանանց հիւանդութիւնների համար։
Կոջոր, Ստեփանեանի ամարանոց, դեղատան հանդէպ։
(Հ.Հ.) 435. 10—8

Գերմանիա գնացող հիւանդներին
Դոկ. Ս. Շահբազեան
ԲԵՐԼԻՆՈՒՄ
Ասիստենտ պրոֆեսոր Գոլդշայդերի և պրոֆ. Կլապի Բեռլինի արքայական համալսարանի կլինիկաներում։
Ընդունում է ամեն տեսակ հիւանդների, [illegible]
Berlin. Karlstrasse 15 III. Telephon Norden 2875, около вокзала Фридрихъ Штрассе.
Dr. med. Schahbasian.
(Հ.Հ.) 458. 10—6

Գ. ՏԷՐ-ՌՈՒԲԻՆԵԱՆԻ
երկու շարադրութիւնների համար
ՀԵՐՑԵՆԻ ԿԵԱՆՔԻ ԵՒ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ
մօտ 4 տպագրական թերթ, և
ՖԻՆԼԱՆԴԻԱՅՈՒՄ
—Նոյնչափ— որոնվում են հրատարակողներ։
Դիմել՝ Գ. Տէր-Գրիգորեանին, Кизиль-Чахчахъ (Карсской области).
512. 2—1

ՀՐԱՒԷՐ
Շամքորեցոց ս. Աստուածածնի (Կարմիր Աւետարան) եկեղեցու ծխականները կիրակի, ամսիս 15-ին, առաւօտեան ժամը 10-ին հրաւիրվում են ծխական ժողովի։
Օրակարգի հարցերն են. 1) Հանգուցեալ Ն. Տէր-Ղազարեանի ժառանգների ծախքով եկեղեցու գաւիթը վերաշինելու խնդիրը. 2) Ընթացիկ հարցեր։
Հոգաբարձութիւն

ԶԵՂՉԾ ԳԻՆՔ!!!
ՄԻԱՅՆ 2 Ր. 95 Կ.

Ուղարկում ենք հետևեալ 14 արժէքաւոր իրերը. 1) [illegible] գրպանի չթեղ և գիմցային ժամացոյց «Ռեկեր» (ռ-ցիլինդր) [illegible] 36 ժամ մէկ անգամ լարելով, [illegible] 15 տարի։ 2) Նորաձեւ չթեղ շղթայ, [illegible] 3) Բրելոկ [illegible] 4) [illegible] 5) [illegible] 6) Թատրոնական բինոկլ. 7) [illegible] 8) [illegible] 9—14) [illegible]
[illegible] 2 ր. 95 կ., 2 զարդ. 5 ր. 50 կ., 4 զարդ. 10 ր. 50 կ. [illegible]
И. ШТРУМФЕЛЬДЪ, Варшава, Электоральная, 11. Отд. 67.
(Հ.) (В. 36395) 6—5

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный.